ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1952 Общественные науки

Ի. ՍՏԱԼԻՆ

# ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՍՍՌՄ-ՈՒՄ

Տնտեսագիտական դիսկուսիայի
մասնակիցներին

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԿԱՊՎԱԾ 1951 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ՀԵՏ

*Ես ստացել եմ քաղաքատնտեսության դասագրքի նախագծի գնահատման պապակցությամբ կազմակերպված տնտեսագիտական դիսկուսիային վերաբերող բոլոր փաստաթղթերը։ Այդ թվում ստացել եմ «Քաղաքատնտեսության դասագրքի նախագծի բարելավման ուղղությամբ առաջարկությունները», նախագծում «Սխալները և անճշտությունները վերացնելու ուղղությամբ առաջարկությունները», «Վիճելի հարցերի մասին տեղեկանքը»։*

*Այդ բոլոր նյութերի, ինչպես նաև դասագրքի նախագծի վերաբերյալ անհրաժեշտ եմ համարում անել հետևյալ դիտողությունները։*

### 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

*Որոշ ընկերներ ժխտում են գիտության օրենքների, առանձնապես քաղաքատնտեսության օրենքների օբեկտիվ բնույթը սոցիալիզմի ժամանակ։ Նրանք ժխտում են, որ քաղաքատնտեսության օրենքները արտացոլում են մարդկանց կամքից անկախ կատարվող պրոցեսների օրինաչափությունները։ Նրանք գտնում են, թե պատմության կողմից Սովետական պետությանը տրված առանձնահատուկ դերի պատճառով Սովետական պետությունը, նրա ղեկավարները կարող են վերացնել քաղաքատնտեսության գոյություն ունեցող օրենքները, կարող են «սահմանել» նոր օրենքներ, «ստեղծել» նոր օրենքներ։*

*Այդ ընկերները խորապես սխալվում են։ Նրանք, ինչպես երևում է, բնության կամ հասարակության մեջ մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող օբեկտիվ պրոցեսներն արտացոլող գիտության օրենքները շփոթում են այն օրենքների հետ, որ հրատարակում են կառավարությունները, ստեղծվում են մարդկանց կամքով և լոկ իրավական ուժ ունեն։ Բայց դրանք ամենևին չփոթել չի կարելի։*

*Մարքսիզմը գիտության օրենքները,— միևնույն է՝ խոսքը բնագիտության օրենքների թե քաղաքատնտեսության օրենքների մասին է,— ըմբռնում է որպես մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող օբեկտիվ պրոցեսների արտացոլում։ Մարդիկ կարող են հայտնագործել այդ օրենքները, ճանաչել դրանք,*

ուսումնասիրել դրանք, հաշվի առնել դրանք իրենց գործողություններում, օգտագործել դրանք հօգուտ հասարակության, բայց նրանք չեն կարող փոխել կամ վերացնել դրանք։ Նրանք առավել ևս չեն կարող սահմանել կամ ստեղծել գիտության նոր օրենքներ։

Նշանակո՞ւմ է սա արդյոք, որ, օրինակ, բնության օրենքների գործողությունների հետևանքները, բնության ուժերի գործողությունների հետևանքներն առհասարակ անկանխելի են, որ բնության ուժերի կործանարար գործողություններն ամենուրեք և մշտապես տեղի են ունենում մարդկանց ներգործության չենթարկվող տարերային-անողոք ուժով։ Ո՛չ, չի նշանակում։ Եթե նկատի չունենանք աստղաբաշխական, երկրաբանական և համանման մի քանի այլ պրոցեսներ, որտեղ մարդիկ, եթե նույնիսկ նրանք ճանաչել են այդ պրոցեսների զարգացման օրենքները, իսկապես անզոր են ներգործելու նրանց վրա, ապա շատ ուրիշ դեպքերում մարդիկ ամենևին էլ անզոր չեն բնության պրոցեսների վրա իրենց ներգործության հնարավորության իմաստով։ Բոլոր այդպիսի դեպքերում մարդիկ, ճանաչելով բնության օրենքները, հաշվի առնելով դրանք և հենվելով դրանց վրա, հմտորեն կիրառելով ու օգտագործելով դրանք, կարող են սահմանափակել դրանց գործողության ոլորտը, բնության կործանարար ուժերին տալ այլ ուղղություն, բնության կործանարար ուժերը օգտակար դարձնել հասարակությանը։

Վերցնենք բազմաթիվ օրինակներից մեկը։ Ենոգույն դարաշրջանում մեծ գետերի վարարումը, հեղեղները, այդ կապակցությամբ էլ բնակարանների ու ցանքսերի ոչնչացումը համարվում էին անկանխելի աղետ, որի դեմ մարդիկ անզոր էին։ Սակայն ժամանակի ընթացքում, մարդկային գիտելիքների զարգացման հետ մեկտեղ, երբ մարդիկ սովորեցին ամբարտակներ և հիդրոկայաններ կառուցել, հնարավոր դարձավ հասարակությանը զերծ պահել հեղեղների աղետներից, որոնք նախկինում անկանխելի էին թվում։ Ավելին, մարդիկ սովորեցին սանձահարել բնության կործանարար ուժերը, այսպես ասած թամբել դրանք, ջրի ուժը օգտակար դարձնել հասարակությանը և այն օգտագործել դաշտերը ոռոգելու համար, էներգիա ստանալու համար։

Նշանակո՞ւմ է սա արդյոք, թե մարդիկ դրանով իսկ վերացրին բնության օրենքները, գիտության օրենքները, ստեղծեցին բնության նոր օրենքներ, գիտության նոր օրենքներ։ Ո՛չ, չի նշանակում։ Բանն այն է, որ ջրի կործանարար ուժերի գործողությունները կանխելու և դրանք հասարակության օգտին գործադրելու այդ ամբողջ պրոցեդուրան ընթանում է առանց գիտության օրենքների որևէ խախտման, փոփոխման կամ ոչնչացման, առանց գիտության նոր օրենքներ ստեղծելու։ Ընդհակառակը, այդ ամբողջ պրոցեդուրան իրագործվում է բնության օրենքների, գիտության օրենքների ճշգրիտ հիման վրա, որովհետև բնության օրենքների որևէ խախտումը, դրանց ամենափոքր խախտումը միայն կկազմալուծեր գործը, կվիժեցներ պրոցեդուրան։

Նույնը պետք է ասել տնտեսական զարգացման օրենքների մասին, քաղաքատնտեսության օրենքների մասին,— միևնույն է՝ խոսքը կապիտալիզմի ժամանակաշրջանի մասին է թե սոցիալիզմի ժամանակաշրջանի։ Այստեղ ևս, ինչպես և բնագիտության մեջ, տնտեսական զարգացման օրենքները հանդիսանում են մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող տնտեսական զարգացման պրոցեսներն արտացոլող օբյեկտիվ օրենքներ։ Մարդիկ կարող են հայտնագործել այդ օրենքները, ճանաչել դրանք և, հենվելով դրանց վրա, օգտա-

գործել դրանք հօդուտ հասարակության, այլ ուղղություն տալ որոշ օրենքների կործանարար գործողություններին, սահմանափակել դրանց գործողության ոլորտը, լայն ասպարեզ տալ իրենց համար ճանապարհ հարթող մյուս օրենքներին, բայց նրանք չեն կարող ոչնչացնել այդ օրենքները կամ ստեղծել նոր տնտեսական օրենքներ։

Քաղաքատնտեսության առանձնահատկություններից մեկն այն է, որ նրա օրենքները, ի տարբերություն բնագիտության օրենքների, հարատև չեն, որ դրանք, կոնկ դրանց մեծամասնությունը, գործում են որոշ պատմական ժամանակաշրջանի ընթացքում, որից հետո դրանք իրենց տեղը զիջում են նոր օրենքներին։ Բայց դրանք, այդ օրենքները, չեն ոչնչացվում, այլ կորցնում են իրենց ուժը նոր տնտեսական պայմանների շնորհիվ և հեռանում են ասպարեզից, «բպեսզի զիջեն տեղը նոր օրենքներին, որոնք մարդկանց կամքով չեն ստեղծվում, այլ առաջանում են նոր տնտեսական պայմանների բազայի վրա։

Վկայակոչում են Էնգելսի «Անտի-Դյուրինգ»-ը, նրա այն ֆորմուլան, որ կապիտալիզմի լիկվիդացումով և արտադրության միջոցների հանրայնացումով մարդիկ իշխանություն կստանան իրենց արտադրության միջոցների վրա, որ նրանք ազատություն կստանան հասարակական-տնտեսական հարաբերությունների ճնշումից, կդառնան իրենց հասարակական կյանքի «տերերը»։ Էնգելսը այդ ազատությունն անվանում է «ճանաչված անհրաժեշտություն»։ Իսկ ի՞նչ կարող է նշանակել «ճանաչված անհրաժեշտություն»։ Դա նշանակում է, որ մարդիկ, ճանաչելով օբյեկտիվ օրենքները («անհրաժեշտությունը»), այդ օրենքները միանգամայն գիտակցորեն կկիրառեն հօդուտ հասարակության։ Հենց այդ պատճառով էլ Էնգելսը նույն տեղում ասում է, որ

«նրանց սեփական հասարակական գործողությունների օրենքները, որոնք մինչև այժմ կանգնած էին մարդկանց դեմ որպես օտար, նրանց վրա իշխող բնության օրենքներ, գործի լիակատար իմացությամբ կկիրառվեն մարդկանց կողմից, հետևապես, կենթարկվեն նրանց իշխանությանը»։

Էնգելսի ֆորմուլան, ինչպես երևում է, խոսում է ամենևին ոչ նրանց օգտին, ովքեր կարծում են, թե սոցիալիզմի ժամանակ կարելի է ոչնչացնել գոյություն ունեցող տնտեսական օրենքները և ստեղծել նորերը։ Այդ ֆորմուլան, ընդհակառակը, պահանջում է ոչ թե ոչնչացնել, այլ ճանաչել տնտեսական օրենքները և հմտորեն կիրառել դրանք։

Ասում ես, թե տնտեսական օրենքները տարերային բնույթ են կրում, թե այդ օրենքների գործողությունները անկանխելի են, թե հասարակությունը անզոր է դրանց հանդեպ։ Դա ճիշտ չէ։ Դա օրենքների ֆետիշացում է, օրենքներին սարկանալ է։ Ապացուցված է, որ հասարակությունն անզոր չէ օրենքների հանդեպ, որ հասարակությունը, ճանաչելով տնտեսական օրենքները և հենվելով դրանց վրա, կարող է սահմանափակել դրանց գործողության ոլորտը, օգտագործել դրանք հօդուտ հասարակության և «ծամրել» դրանք, ինչպես այդ տեղի ունի բնության ուժերի ու դրանց օրենքների նկատմամբ, ինչպես այդ տեղի ունի մեծ գետերի վարարման վերաբերյալ վերը բերված օրինակում։

Վկայակոչում են Սովետական իշխանության առանձնահատուկ դերը սոցիալիզմի կառուցման գործում, մի դեր, որն իբր թե իշխանությանը հնարավորություն է տալիս ոչնչացնելու տնտեսական զարգացման գոյություն ունեցող օրենքները և «սահմանելու» նորերը։ Դա նույնպես ճիշտ չէ։

Սովետական իշխանության առանձնահատուկ դերը բացատրվում է երկու հանգամանքներով՝ առաջին, նրանով, որ Սովետական իշխանությունը պետք է ոչ թե փոխարիներ շահագործման մի ձևը մյուս ձևով, ինչպես այդ տեղի ուներ հին ռևոլուցիաներում, այլ պետք է լիկվիդացներ ամեն մի շահագործում. երկրորդ, նրանով, որ երկրում սոցիալիստական տնտեսության պատրաստի սաղմերի իսպառ բացակայության պատճառով նա պետք է, այսպես ասած՝ «ամայի տեղում» ստեղծեր տնտեսության նոր, սոցիալիստական ձևեր։

Այդ խնդիրը անշուշտ դժվարին էր և բարդ, նախադեպեր չունեցող։ Այնուամենայնիվ, Սովետական իշխանությունը պատվով կատարեց այդ խնդիրը։ Բայց նա այդ կատարեց ոչ թե այն բանի շնորհիվ, որ իբր թե ոչնչացրեց գոյություն ունեցող տնտեսական օրենքները և «սահմանեց» նորերը, այլ միայն շնորհիվ այն բանի, որ նա հենվում էր արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքի վրա։ Մեր երկրի արտադրողական ուժերը, առանձնապես արդյունաբերության մեջ, ունեին հասարակական բնույթ, իսկ սեփականության ձևը մասնավոր էր, կապիտալիստական։ Հենվելով արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքի վրա, Սովետական իշխանությունը հանրայնացրեց արտադրության միջոցները, դրանք դարձրեց ամբողջ ժողովրդի սեփականություն և հենց դրանով էլ ոչնչացրեց շահագործման սիստեմը, ստեղծեց տնտեսության սոցիալիստական ձևեր։ Եթե չլիներ այդ օրենքը, և եթե Սովետական իշխանությունը չհենվեր դրա վրա, նա չէր կարող կատարել իր խնդիրը։

Արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքը վաղուց է իր համար ճանապարհ հարթում կապիտալիստական երկրներում։ Եթե նա դեռևս ճանապարհ չի հարթել իր համար և դեռ լայն ասպարեզ չի ելել, ապա դա այն պատճառով, որ նա շատ ուժեղ դիմադրության է հանդիպում հասարակության մահացող ուժերի կողմից։ Այստեղ մենք հանդիպում ենք տնտեսական օրենքների մյուս առանձնահատկությանը։ Ի տարբերություն բնագիտության օրենքների, որտեղ նոր օրենքի հայտնագործումը և կիրառումը քիչ թե շատ հարթ է բնթանում, տնտեսական բնագավառում հասարակության մահացող ուժերի շահերին դիպչող նոր օրենքի հայտնագործումը և կիրառումը շատ ուժեղ դիմադրության են հանդիպում այդ ուժերի կողմից։ Հետևաբար, հարկավոր է մի ուժ, այդ դիմադրությունը հաղթահարելու ընդունակ հասարակական ուժ։ Մեր երկրում այդ ուժը գտնվեց հասարակության ճնշող մեծամասնությունը ներկայացնող բանվոր դասակարգի և գյուղացիության գաշինքի ձևով։ Այդպիսի ուժ դեռևս չի գտնվել մյուս, կապիտալիստական երկրներում։ Դրանում է այն բանի գաղտնիքը, որ Սովետական իշխանությանը հաջողվեց չախջախել հասարակության հին ուժերը, իսկ արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքը լիակատար ասպարեզ ստացավ մեզ մոտ։

Ասում են, թե մեր երկրի ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման անհրաժեշտությունը Սովետական իշխանությանը հնարավորություն է տալիս ոչնչացնելու գոյություն ունեցող տնտեսական օրենքները և ստեղծելու նորերը։ Դա միանգամայն սխալ է։ Չի կարելի մեր

տարեկան և հնգամյա պլանները շփոթել ժողովրդական տնտեսության պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացման օբեկտիվ տնտեսական օրենքի հետ։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքը առաջացավ ի հակակշիռ կապիտալիզմի ժամանակ գործող կոնկուրենցիայի և արտադրության անարխիայի օրենքի։ Նա առաջացավ արտադրության միջոցների հանրայնացման բազայի վրա, այն բանից հետո, երբ կոնկուրենցիայի ու արտադրության անարխիայի օրենքը կորցրեց իր ուժը։ Նա գործողության մեջ մտավ այն պատճառով, որ սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը կարելի է վարել միայն ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման տնտեսական օրենքի հիման վրա։ Դա նշանակում է, որ ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքը մեր պլանավորող օրգաններին ենարավորություն է տալիս ճիշտ պլանավորելու հասարակական արտադրությունը։ Բայց ենարավորությունը չի կարելի շփոթել իրականության հետ։ Դրանք երկու տարբեր բաներ են։ Այդ հնարավորությունը իրականություն դարձնելու համար հարկավոր է ուսումնասիրել այդ տնտեսական օրենքը, հարկավոր է տիրապետել դրան, հարկավոր է սովորել այն կիրառել գործի լիակատար իմացությամբ, հարկավոր է կազմել այնպիսի պլաններ, որոնք լիովին արտացոլում են այդ օրենքի պահանջները։ Չի կարելի ասել, թե մեր տարեկան և հնգամյա պլանները լիովին արտացոլում են այդ տնտեսական օրենքի պահանջները։

Ասում են, թե մեզ մոտ սոցիալիզմի ժամանակ գործող որոշ տնտեսական օրենքներ, այդ թվում նաև արժեքի օրենքը, պլանային տնտեսության հիման վրա «վերափոխված» կամ նույնիսկ «արմատապես վերափոխված» օրենքներ են։ Դա նույնպես սխալ է։ Չի կարելի «վերափոխել» օրենքները, այն էլ «արմատապես»։ Եթե կարելի է վերափոխել դրանք, ապա կարելի է նաև ոչնչացնել, փոխարինելով այլ օրենքներով։ Օրենքների «վերափոխման» թեզիսը օրենքների «ոչնչացման» և «սահմանման» սխալ ֆորմուլայի մնացուկն է։ Թեև տնտեսական օրենքների վերափոխման ֆորմուլան վաղուց արդեն գործածության մեջ է մտել մեզ մոտ, պետք է հրաժարվել նրանից հանուն ճշգրտության։ Կարելի է սահմանափակել այս կամ այն տնտեսական օրենքի գործողության ոլորտը, կարելի է կանխել այդ օրենքների կործանարար գործողությունները, եթե, իհարկե, այդպիսիք կան, բայց չի կարելի «վերափոխել» կամ «ոչնչացնել» դրանք։

Հետևարար, երբ խոսում են բնության ուժերը կամ տնտեսական ուժերը «հնազանդեցնելու» մասին, նրանց վրա «իշխելու» մասին և այլն, ապա դրանով երբեք չեն ուզում ասել, թե մարդիկ կարող են «ոչնչացնել» գիտության օրենքները կամ «սահմանել» դրանք։ Ընդհակառակը, դրանով ուզում են ասել միայն այն, որ մարդիկ կարող են հայտնագործել օրենքները, ճանաչել դրանք, տիրապետել դրանց, սովորել կիրառել դրանք գործի լիակատար իմացությամբ, օգտագործել դրանք հօգուտ հասարակության և այդ ձևով հնազանդեցնել դրանց, իշխել դրանց վրա։

Այսպես ուրեմն, սոցիալիզմի ժամանակ քաղաքատնտեսության օրենքները օբեկտիվ օրենքներ են, որոնք արտացոլում են տնտեսական կյանքի՝ մեր կամքից անկախ կատարվող պրոցեսների օրինաչափությունը։ Այս դրույթը ժխտող մարդիկ ըստ էության ժխտում են գիտությունը, իսկ գիտությունը ժխտելով, դրանով իսկ ժխտում են ամեն մի կանխատեսման հնարավորու-

թյուն.— հետևապես, ժխտում են տնտեսական կյանքը ղեկավարելու հնարավորությունը։

Կարող են ասել, թե այն ամենը, ինչ ասվեց այստեղ, ճիշտ և հանրահայտ է, բայց նրա մեջ ոչ մի նոր բան չկա և որ, հետևաբար, չարժե ժամանակ վատնել հանրահայտ ճշմարտությունները կրկնելու վրա։ Այստեղ, իհարկե, իսկապես ոչ մի նոր բան չկա, բայց ճիշտ չէր լինի կարծել, թե չարժե ժամանակ վատնել մեզ հայտնի որոշ ճշմարտությունները կրկնելու վրա։ Բանն այն է, որ ամեն տարի մեզ, որպես ղեկավար միջուկի, մոտենում են հազարավոր նոր երիտասարդ կադրեր, նրանք այրվում են մեզ օգնելու տենչով, այրվում են իրենց ցույց տալու տենչով, բայց չունեն բավականաչափ մարքսիստական դաստիարակություն, չգիտեն շատ, մեզ լավ հայտնի ճշմարտությունները և ստիպված են խարխափել խավարում։ Նրանք ապշած են Սովետական իշխանության վիթխարի նվաճումներից, նրանց գլուխը պտտվում է սովետական հասարակարգի արտակարգ հաջողություններից, և նրանք սկսում են երևակայել, թե Սովետական իշխանությունը «ամեն ինչ կարող է», թե նրա համար «ամեն բան հեշտ է», թե նա կարող է ոչնչացնել գիտության օրենքները, սահմանել նոր օրենքներ։ Ինչպե՞ս վարվել այդ ընկերների հետ։ Ինչպե՞ս նրանց դաստիարակել մարքսիզմ-լենինիզմի ոգով։ Ես կարծում եմ, որ այսպես կոչված «հանրահայտ» ճշմարտությունների սիստեմատիկ կրկնումը, դրանց համբերատար պարզաբանումը այդ ընկերների մարքսիստական դաստիարակման լավագույն միջոցներից մեկն է։

## 2. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Որոշ ընկերներ պնդում են, թե պարտիան ճիշտ չի վարվել, պահպանելով ապրանքային արտադրությունը այն բանից հետո, երբ նա վերցրեց իշխանությունը և ազգայնացրեց արտադրության միջոցները մեր երկրում։ Նրանք գտնում են, թե պարտիան հենց այն ժամանակ պետք է վերացներ ապրանքային արտադրությունը։ Ընդ որում նրանք վկայակոչում են Էնգելսին, որն ասում է

«Քանի որ հասարակությունը իր տրամադրության տակ կվերցնի արտադրության միջոցները, ապա կվերացվի ապրանքային արտադրությունը, իսկ դրա հետ միասին նաև արդյունքների տիրապետությունը արտադրողների վրա» (տե՛ս «Անտի-Դյուրինգ»-ը)։

Այդ ընկերները խորապես սխալվում են։

Քննենք Էնգելսի ֆորմուլան։ Էնգելսի ֆորմուլան չի կարելի լիովին պարզ և ճշգրիտ համարել, որովհետև այնտեղ չի նշվում, թե խոսքը արդյոք այն մասին է, որ հասարակությունը պետք է արտադրության բոլոր միջոցները վերցնի իր տրամադրության տակ, թե արտադրության միջոցների միայն մի մասը, այսինքն՝ արտադրության բոլո՞ր միջոցներն են արդյոք համաժողովրդական սեփականություն դարձված, թե արտադրության միջոցների միայն մի մասը։ Նշանակում է՝ Էնգելսի այդ ֆորմուլան կարելի է հասկանալ և՛ այսպես, և՛ այնպես։

«Անտի-Դյուրինգ»-ի մի այլ տեղում Էնգելսը խոսում է «արտադրության բոլոր միջոցներին» տիրելու, «արտադրության միջոցների ամբողջությանը» տիրելու մասին։ Նշանակում է՝ Էնգելսն իր ֆորմուլայում նկատի ունի ո՞չ թե ար-

տադրության միջոցների մի մասի, այլ արտադրության բոլոր միջոցների աղդայնացումը, այսինքն՝ արտադրության միջոցները համաժողովրդական սեփականություն դարձնելը ո՛չ միայն արդյունաբերության մեջ, այլև գյուղատնտեսության մեջ։

Դրանից հետևում է, որ Էնգելսը նկատի ունի այնպիսի երկրներ, որտեղ կապիտալիզմը և արտադրության համակենտրոնացումը ո՛չ միայն արդյունաբերության մեջ, այլև գյուղատնտեսության մեջ բավականաչափ զարգացած են՝ երկրի արտադրության բոլոր միջոցները էքսպրոպրիացիայի ենթարկելու և դրանք համաժողովրդական սեփականություն դարձնելու համար։ Էնգելսը, հետևաբար, գտնում է, որ այդպիսի երկրներում արտադրության բոլոր միջոցների հանրայնացման հետ մեկտեղ հարկավոր կլիներ վերացնել ապրանքային արտադրությունը։ Եվ այդ, իհարկե, ճիշտ է։

Այդպիսի երկիր էր անցյալ դարի վերջում, «Անտի-Դյուրինգ»-ի լույս ընծայման ժամանակ, միայն մեկ երկիր՝ Անգլիան, որտեղ կապիտալիզմի զարգացումը և արտադրության համակենտրոնացումը ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ հասցված էին այնպիսի կետի, որ իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու դեպքում հնարավոր էր երկրի արտադրության բոլոր միջոցները դարձնել համաժողովրդական սեփականություն և մեջտեղից վերացնել ապրանքային արտադրությունը։

Ես տվյալ դեպքում մի կողմ եմ թողնում Անգլիայի համար արտաքին առևտրի ունեցած նշանակության հարցը՝ Անգլիայի ժողովրդական տնտեսության մեջ նրա վիթխարի տեսակարար կշռով հանդերձ։ Ես կարծում եմ, որ այդ հարցը ուսումնասիրելուց հետո միայն հնարավոր կլիներ վերջնականապես լուծել ապրանքային արտադրության ճակատագրի հարցը Անգլիայում՝ իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելուց և արտադրության բոլոր միջոցները ազգայնացնելուց հետո։

Ի դեպ, ո՛չ միայն անցյալ դարի վերջում, այլև ներկա ժամանակներում դեռ ոչ մի երկիր չի հասել կապիտալիզմի զարգացման և արտադրության համակենտրոնացման այն աստիճանին գյուղատնտեսության մեջ, որպիսին մենք տեսնում ենք Անգլիայում։ Ինչ վերաբերում է մյուս երկրներին, ապա այնտեղ, չնայած կապիտալիզմի զարգացմանը գյուղում, դեռևս կա գյուղի մանր և միջին սեփականատեր-արտադրողների բավական մեծաթիվ մի դասակարգ, որոնց բախտը հարկ կլիներ որոշել իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու դեպքում։

Բայց ահա մի հարց. ինչպե՞ս պետք է վարվեն պրոլետարիատը և նրա պարտիան, եթե այս կամ այն երկրում, այդ թվում մեր երկրում, կան իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու և կապիտալիզմը տապալելու բարենպաստ պայմաններ, որտեղ կապիտալիզմը արդյունաբերության մեջ այն աստիճան է համակենտրոնացրել արտադրության միջոցները, որ կարելի է դրանք էքսպրոպրիացիայի ենթարկել և դնել հասարակության տրամադրության տակ, բայց որտեղ գյուղատնտեսությունը, չնայած կապիտալիզմի աճմանը, դեռևս այնքան է մասնատված բազմաթիվ մանր ու միջին սեփականատեր-արտադրողների միջև, որ հնարավոր չէ դնել այդ արտադրողներին էքսպրոպրիացիայի ենթարկելու հարցը։

Այս հարցին Էնգելսի ֆորմուլան պատասխան չի տալիս։ Ի դեպ, նա չպետք է էլ պատասխան տա այս հարցին, որովհետև նա առաջացել է այլ

հարցի, հատկապես այն հարցի բազայի վրա, թե ի՞նչ ճակատագիր պետք է ունենա ապրանքային արտադրությունն այն բանից հետո, երբ հանրայնացված են արտադրության բոլոր միջոցները։

Այսպես ուրեմն, ինչպե՞ս վարվել, եթե հանրայնացված են արտադրության ոչ-բոլոր միջոցները, այլ արտադրության միջոցների միայն մի մասը, իսկ իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու բարենպաստ պայմաններն առկա են,— արդյոք պրոլետարիատը պե՞տք է գրավի իշխանությունը և արդյոք հարկավո՞ր է դրանից անմիջապես հետո ոչնչացնել ապրանքային արտադրությունը։

Չի կարելի, իհարկե, պատասխան անվանել որոշ վայ-մարքսիստների կարծիքը, որոնք գտնում են, թե այդպիսի պայմաններում հարկ կլիներ հրաժարվել իշխանությունը գրավելուց և սպասել, մինչև որ կապիտալիզմը քայքայի միլիոնավոր մանր և միջին արտադրողներին, նրանց դարձնելով բատրակներ, և համակենտրոնացնի արտադրության միջոցները գյուղատնտեսության մեջ, թե դրանից հետո միայն կարելի էր դնել իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելու և արտադրության բոլոր միջոցները հանրայնացնելու հարցը։ Հասկանալի է, որ մարքսիստները, եթե նրանք չեն ուզում ամբողջապես խայտառակել իրենց, չեն կարող համաձայնել այդպիսի «ելքի» հետ։

Չի կարելի պատասխան համարել նաև այն վայ-մարքսիստների կարծիքը, որոնք կարծում են, թե հարկ կլիներ, թերևս, գրավել իշխանությունը և էքսպրոպրիացիայի ենթարկել մանր ու միջին արտադրողներին գյուղում և հանրայնացնել նրանց արտադրության միջոցները։ Այդ անմիտ ու հանցավոր ուղուն նույնպես չեն կարող դիմել մարքսիստները, որովհետև այդ ուղին կխափաներ պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի ամեն մի հնարավորություն, գյուղացիությանը երկար ժամանակով կնետեր պրոլետարիատի թշնամիների լաղերը։

Այդ հարցին պատասխան է տվել Լենինը «պարենհարկի մասին» իր աշխատություններում և իր հռչակավոր «կոոպերատիվ պլանում»։

Լենինի պատասխանը համառոտակի հանգում է հետևյալին՝

ա) բաց չթողնել իշխանությունը գրավելու համար բարենպաստ պայմանները, պրոլետարիատը պետք է գրավի իշխանությունը, չսպասելով մինչև այն մոմենտը, երբ կապիտալիզմը կկարողանա քայքայել մանր ու միջին անհատական արտադրողների բազմամիլիոն բնակչությանը.

բ) էքսպրոպրիացիայի ենթարկել արտադրության միջոցները արդյունաբերության մեջ և դրանք դարձնել համաժողովրդական սեփականություն.

գ) ինչ վերաբերում է մանր ու միջին անհատական արտադրողներին, ապա նրանց աստիճանաբար միավորել արտադրական կոոպերատիվներում, այսինքն՝ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների մեջ.

դ) ամեն կերպ զարգացնել ինդուստրիան և կոլտնտեսությունները դնել խոշոր արտադրության ժամանակակից տեխնիկական բազայի վրա, ընդորում ո՛չ թե էքսպրոպրիացիայի ենթարկել, այլ, ընդհակառակը, ուժեղ թափով առաջնակարգ տրակտորներ և այլ մեքենաներ մատակարարել նրանց.

ե) իսկ քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական զոդման համար մի որոշ ժամանակվա ընթացքում պահպանել ապրանքային արտադրությունը (փոխանակությունը առուծախի միջո-

ցով) որպես քաղաքի հետ տնտեսական կապերի՝ գյուղացիների համար միակ ընդունելի ձևը, և լայնորեն ծավալել սովետական՝ պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային առևտուրը, ապրանքաշրջանառությունից դուրս մղելով բոլոր և ամեն տեսակ կապիտալիստներին։

Մեր սոցիալիստական շինարարության պատմությունը ցույց է տալիս. որ Լենինի նշած զարգացման այդ ուղին լիովին արդարացրել է իրեն։

Տարակույս չի կարող լինել, որ մանր ու միջին արտադրողների քիչ թե շատ մեծաթիվ դասակարգ ունեցող բոլոր կապիտալիստական երկրների համար կարդացման այդ ուղին միակ հնարավոր և նպատակահարմար ուղին է սոցիալիզմի հաղթանակի համար։

Ասում են, թե ապրանքային արտադրությունը, այնուամենայնիվ, բոլոր պայմաններում էլ պետք է տանի և անպայմանորեն կտանի դեպի կապիտալիզմ։ Դա ճիշտ չէ։ Ո՛չ միշտ և ո՛չ ամեն տեսակ պայմաններում։ Չի կարելի ապրանքային արտադրությունը նույնացնել կապիտալիստական արտադրության հետ։ Դրանք երկու տարբեր բաներ են։ Կապիտալիստական արտադրությունը ապրանքային արտադրության բարձրագույն ձևն է։ Ապրանքային արտադրությունը դեպի կապիտալիզմ է տանում միայն այն դեպքում, երբ գոյություն ունի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, երբ աշխատուժը շուկա է դուրս գալիս որպես ապրանք, որը կապիտալիստը կարող է դնել և շահագործել արտադրության պրոցեսում, երբ, հետևաբար, երկրում գոյություն ունի կապիտալիստների կողմից վարձու բանվորների շահագործման սիստեմ։ Կապիտալիստական արտադրությունը սկսվում է այնտեղ, որտեղ արտադրության միջոցները կենտրոնացած են մասնավոր ձեռքերում, իսկ բանվորները, որոնք զուրկ են արտադրության միջոցներից, ստիպված են վաճառել իրենց աշխատուժը որպես ապրանք։ Առանց դրան չկա կապիտալիստական արտադրություն։

Լա՜վ, իսկ եթե չկան այն պայմանները, որոնք ապրանքային արտադրությունը դարձնում են կապիտալիստական արտադրություն, եթե արտադրության միջոցները արդեն ո՛չ թե մասնավոր, այլ սոցիալիստական սեփականություն են կազմում, եթե գոյություն չունի վարձու աշխատանքի սիստեմ, և աշխատուժը այլևս ապրանք չէ, եթե շահագործման սիստեմը վաղուց արդեն լիկվիդացված է,— ինչպե՞ս վարվել այդ դեպքում. կարելի՞ է արդյոք համարել, թե ապրանքային արտադրությունը այնուամենայնիվ կտանի դեպի կապիտալիզմ։ Ո՛չ, չի կարելի համարել։ Չէ՞ որ մեր հասարակությունը հենց այնպիսի հասարակություն է, որտեղ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, վարձու աշխատանքի սիստեմը, շահագործման սիստեմը վաղուց արդեն գոյություն չունեն։

Չի կարելի ապրանքային արտադրությունը դիտել որպես ինչ-որ ինքնաբավ, շրջապատող տնտեսական պայմաններից անկախ արտադրություն։ Ապրանքային արտադրությունն ավելի հին է, քան կապիտալիստական արտադրությունը։ Նա գոյություն ուներ ստրկատիրական հասարակարգի պայմաններում և սպասարկում էր նրան, սակայն չհասցրեց կապիտալիզմին։ Նա գոյություն ուներ ֆեոդալիզմի պայմաններում և սպասարկում էր նրան, սակայն, չնայած որ նա որոշ պայմաններ նախապատրաստեց կապիտալիստական արտադրության համար, չհասցրեց կապիտալիզմին։ Հարց է ծագում, թե ինչո՞ւ ապրանքային արտադրությունը նույնպես մի որոշ ժամանակաշրջա-

նում չի կարող սպասարկել մեր սոցիալիստական հասարակարգին, չտանելով դեպի կապիտալիզմ, եթե նկատի ունենանք այն, որ ապրանքային արտադրությունը մեզ մոտ այնպես անսահմանափակ ու համապարփակ կերպով չի տարածված, ինչպես կապիտալիստական պայմաններում, որ այդ արտադրությունը մեզ մոտ դրված է խիստ շրջանակների մեջ տնտեսական այնպիսի վճռական պայմանների շնորհիվ, ինչպիսիք են արտադրության միջոցների հանրային սեփականությունը, վարձու աշխատանքի սիստեմի լիկվիդացումը, շահագործման սիստեմի լիկվիդացումը։

Ասում են, թե այն բանից հետո, երբ մեր երկրում հաստատվեց արտադրության միջոցների հանրային սեփականության տիրապետություն, իսկ վարձու աշխատանքի և շահագործման սիստեմը լիկվիդացվեց, ապրանքային արտադրության գոյությունը կորցրել է իր իմաստը, որ այդ պատճառով էլ հարկավոր է վերացնել ապրանքային արտադրությունը։

Դա նույնպես ճիշտ չէ։ Ներկայումս մեզանում գոյություն ունեն սոցիալիստական արտադրության երկու հիմնական ձևեր՝ պետական-համաժողովրդական և կոլտնտեսային, որը չի կարելի համաժողովրդական անվանել։ Պետական ձեռնարկություններում արտադրության միջոցները և արտադրության արտադրանքը համաժողովրդական սեփականություն են կազմում։ Իսկ կոլտնտեսային ձեռնարկություններում, թեպետև արտադրության միջոցները (հողը, մեքենաները) պատկանում են պետությանը, սակայն արտադրության արտադրանքը կազմում է առանձին կոլտնտեսությունների սեփականությունը, որովհետև կոլտնտեսություններում աշխատանքը, ինչպես և սերմացուն,— իրենց սեփականն է, իսկ կոլտնտեսություններին առհավետ օգտագործման հանձնված հողը կոլտնտեսությունները փաստորեն տնօրինում են ինչպես իրենց սեփականությունը, չնայած որ նրանք չեն կարող հողը վաճառել, գնել, վարձակալության հանձնել կամ դրավ դնել։

Այս հանգամանքը հանգեցնում է այն բանին, որ պետությունը կարող է տնօրինել միայն պետական ձեռնարկությունների արտադրանքը, այնինչ կոլտնտեսային արտադրանքը տնօրինում են միայն կոլտնտեսությունները, որպես իրենց սեփականությունը։ Բայց կոլտնտեսություններն իրենց մթերքները չեն ցանկանում օտարել այլ կերպ, քան որպես ապրանքներ, որոնց փոխարեն նրանք ցանկանում են ստանալ իրենց հարկավոր ապրանքները։ Ներկայումս ապրանքային կապերից բացի, առուծախի միջոցով կատարվող փոխանակությունից բացի, կոլտնտեսություններն այլ տնտեսական կապեր քաղաքի հետ չեն ընդունում։ Ուստի ապրանքային արտադրությունը և ապրանքաշրջանառությունը մեզանում ներկայումս նույնպիսի անհրաժեշտություն են, ինչպիսիք էին դրանք, ասենք, մի երեսուն տարի առաջ, երբ Լենինը հռչակեց ապրանքաշրջանառությունն ամեն կերպ ծավալելու անհրաժեշտությունը։

Իհարկե, երբ երկու հիմնական արտադրական սեկտորների՝ պետական ու կոլտնտեսային սեկտորների փոխարեն հանդես դա մեկ համապարփակ արտադրական սեկտոր, որն իրավունք ունենա տնօրինելու երկրի ամբողջ սպառողական արտադրանքը, ապրանքային շրջանառությունն իր «փողային տնտեսությամբ» կանհետանա որպես ժողովրդական տնտեսության ոչ-պետքական տարր։ Բայց բանի դեռ այդ չկա, բանի դեռ մնում են երկու հիմնական արտադրական սեկտորներ, ապրանքային արտադրությունը և ապրանքային շրջանառությունը պետք է ուժի մեջ մնան որպես անհրաժեշտ ու խիստ օգտակար

տարր մեր ժողովրդական տնտեսության սիստեմում: Թե ի՛նչ ձևով տեղի կունենա միասնական միացյալ սեկտորի ստեղծումը, արդյոք պետական սեկտորի կողմից կոլտնտեսային սեկտորի սոսկ կլանմա՞ն ուղիով, որը քիչ հավանական է (որովհետև դա կընդունվի որպես կոլտնտեսությունների էքսպրոպրիացիա), թե՞ միասնական համաժողովրդական այնպիսի մի տնտեսական օրգան կազմակերպելու միջոցով (որտեղ ներկայացուցչություն կլինի պետարդյունաբերությունից և կոլտնտեսություններից), որն սկզբում իրավունք կունենա հաշվի առնելու երկրի ամբողջ սպառողական արտադրանքը, իսկ ժամանակի ընթացքում՝ նաև բաշխելու արտադրանքը, ասենք, մթերափոխանակության կարգով,— դա առանձին հարց է, որը պահանջում է հատուկ քննարկում:

Հետևապես, մեր ապրանքային արտադրությունը սովորական ապրանքային արտադրություն չէ, այլ առանձնահատուկ ապրանքային արտադրություն, ապրանքային արտադրություն առանց կապիտալիստների, որը հիմնականում գործ ունի միավորված սոցիալիստական արտադրողների (պետություն, կոլտնտեսություններ, կոոպերացիա) ապրանքների հետ, որի գործողության ոլորտը սահմանափակված է անձնական սպառման առարկաներով, որն ակնհայտորեն ոչ մի դեպքում չի կարող զարգանալով դառնալ կապիտալիստական արտադրություն և որին վիճակված է իր «փողային տնտեսության» հետ միասին սպասարկել սոցիալիստական արտադրության զարգացման ու ամրապնդման գործը:

Ուստի բոլորովին իրավացի չեն այն ընկերները, որոնք հայտարարում են, թե քանի որ սոցիալիստական հասարակարգը չի լիկվիդացնում արտադրության ապրանքային ձևերը, մեղանում իբր թե պետք է վերականգնվեն կապիտալիզմին հատուկ բոլոր տնտեսական կատեգորիաները՝ աշխատուժը որպես ապրանք, հավելյալ արժեքը, կապիտալը, կապիտալի շահույթը, շահույթի միջին նորման և այլն: Այդ ընկերները ապրանքային արտադրությունը շփոթում են կապիտալիստական արտադրության հետ և կարծում են, թե քանի որ կա ապրանքային արտադրություն, ապա պետք է լինի նաև կապիտալիստական արտադրություն: Նրանք չեն հասկանում, որ մեր ապրանքային արտադրությունն արմատապես տարբերվում է կապիտալիզմի օրոք եղած ապրանքային արտադրությունից:

Ավելին, ես կարծում եմ, որ անհրաժեշտ է դեն նետել նաև մի քանի այլ հասկացություններ, որ վերցված են Մարքսի «Կապիտալ»-ից, որտեղ Մարքսը զբաղվել է կապիտալիզմի վերլուծությամբ, և արհեստականորեն կպցվում են մեր սոցիալիստական հարաբերություններին: Ես նկատի ունեմ ի միջի այլոց այնպիսի հասկացություններ, ինչպես «անհրաժեշտ» և «հավելյալ» աշխատանք, «անհրաժեշտ» և «հավելյալ» արդյունք, «անհրաժեշտ» և «հավելյալ» ժամանակ: Մարքսը կապիտալիզմը վերլուծում էր նրա համար, որպեսզի պարզեր բանվոր-դասակարգի շահագործման ակբյուրը, հավելյալ արժեքը և արտադրության միջոցներից զրկված բանվոր դասակարգին հոգևոր զենք տար կապիտալիզմը տապալելու համար: Հասկանալի է, որ Մարքսն այդ դեպքում օգտագործում է կապիտալիստական հարաբերություններին լիովին համապատասխանող հասկացություններ (կատեգորիաներ): Բայց ավելի քան տարօրինակ է այդ հասկացությունների օգտագործումը այժմ, երբ բանվոր դասակարգը ո՛չ միայն զուրկ չէ իշխանությունից և արտադրության միջոցներից, այլ, ընդհակառակը, իշխանությունը պահում է իր ձեռքում և տիրում է ար-

տադրության միջոցներին։ Այժմ մեր հասարակարգի պայմաններում բավական անհեթեթ են հնչում աշխատուժի՝ որպես ապրանքի և բանվորների «վարձման» վերտրերող խոսքերը. կարծես թե բանվոր դասակարգը, որը տիրում է արտադրության միջոցներին, վարձում է ինքն իրեն և իր աշխատուժն ինքը վաճառում է իրեն։ Նույնքան տարօրինակ է այժմ «անհրաժեշտ» և «հավելյալ» աշխատանքի մասին խոսելը. կարծես թե մեր պայմաններում բանվորների աշխատանքը, որը տրված է հասարակությանը արտադրությունն ընդլայնելու, կրթությունը, առողջապահությունը զարգացնելու, պաշտպանությունը կազմակերպելու համար և այլն, նույնքան անհրաժեշտ չէ ներկայումս իշխանության դյուխ կանգնած բանվոր դասակարգի համար, որքան այն աշխատանքը, որ ծախսված է բանվորի և նրա ընտանիքի անձնական պահանջները բավարարելու համար։

Պետք է նշել, որ Մարքսը իր «Ռոթայի ծրագրի քննադատությունը» աշխատության մեջ, որտեղ նա հետազոտում է արդեն ո՛չ թե կապիտալիզմը, այլ ի միջի այլոց կոմունիստական հասարակության առաջին փուլը, նա այն աշխատանքը, որը տրվում է հասարակությանը արտադրությունն ընդլայնելու, կրթության, առողջապահության, կառավարչական ծախսերի, ռեզերվներ ստեղծելու համար և այլն, նույնքան անհրաժեշտ է համարում, որքան և այն աշխատանքը, որը ծախսված է բանվոր դասակարգի սպառողական կարիքները բավարարելու համար։

Ես կարծում եմ, որ մեր տնտեսագետները պետք է վերջ դնեն հին հասկացությունների և մեր սոցիալիստական երկրում իրերի նոր գրության միջև եղած այդ անհամապատասխանությանը, հին հասկացությունները փոխարինելով նորերով, նոր դրությանը համապատասխանող հասկացություններով։

Այդ անհամապատասխանությունը մենք կարող էինք հանդուրժել մինչև մի որոշ ժամանակ, բայց հիմա հասել է ժամանակը, երբ մենք պետք է, վերջապես, վերացնենք այդ անհամապատասխանությունը։

## 3. ԱՐԺԵՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԱՐՑԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբեմն հարցնում են, թե մեզանում, մեր սոցիալիստական հասարակարգի պայմաններում արդյոք գոյություն ունի՞ և գործո՞ւմ է արժեքի օրենքը։

Այո՛, գոյություն ունի և գործում է։ Այնտեղ, որտեղ կան ապրանքներ և ապրանքային արտադրություն, չի կարող չլինել նաև արժեքի օրենքը։

Արժեքի օրենքի գործողության ոլորտը մեզանում տարածվում է ամենից առաջ ապրանքային շրջանառության վրա, առուծախի միջոցով կատարվող ապրանքների փոխանակության վրա, գլխավորապես անձնական սպառման ապրանքների փոխանակության վրա։ Այստեղ, այս բնագավառում, արժեքի օրենքը, իհարկե, որոշ սահմաններում, պահպանում է կարգավորիչի իր դերը։

Բայց արժեքի օրենքի գործողությունները չեն սահմանափակվում ապրանքային շրջանառության ոլորտով։ Դրանք տարածվում են նաև արտադրության վրա։ Ճիշտ է, արժեքի օրենքը կարգավորող նշանակություն չունի մեր սոցիալիստական արտադրության մեջ, բայց նա այնուամենայնիվ ներգործում է արտադրության վրա, և արտադրության ղեկավարման ժամանակ այդ բանը չի կարելի հաշվի չառնել։ Բանն այն է, որ այն սպառողական արդյունքները, որոնք անհրաժեշտ են արտադրության պրոցեսում աշխատուժի ծախ-

սումները ծածկելու համար, մեզանում արտադրվում և իրացվում են որպես արժեքի օրենքի ներգործության ենթակա ապրանքներ։ Հենց այստեղ էլ բացահայտվում է արժեքի օրենքի ներգործությունը արտադրության վրա։ Այդ կապակցությամբ մեր ձեռնարկություններում ակտուալ նշանակություն ունեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են տնտեսական հաշվարկի և եկամտաբերության հարցը, ինքնարժեքի հարցը, գների հարցը և այլն։ Ուստի մեր ձեռնարկությունները չեն կարող կառավարվել և չպետք է կառավարվեն առանց արժեքի օրենքի հաշվառման։

Լա՞վ է արդյոք այդ։ Վատ չէ։ Մեր այժմյան պայմաններում այդ իսկապես վատ չէ, որովհետև այդ հանգամանքը մեր տնտեսավարներին դաստիարակում է արտադրությունը ռացիոնալ կերպով վարելու ոգով և կարգապահ է դարձնում նրանց։ Վատ չէ, որովհետև այդ հանգամանքը մեր տնտեսավարներին սովորեցնում է հաշվել արտադրական մեծությունները, հաշվել դրանք ստույգ կերպով և նույնքան էլ ստույգ կերպով հաշվի առնել արտադրության մեջ եղած ռեալ իրերը և ոչ թե շաղակրատել առաստաղից վերցրած «օրիենտիր տվյալների» մասին։ Վատ չէ, որովհետև նա մեր տնտեսավարներին սովորեցնում է փնտրել, գտնել և օգտագործել արտադրության ընդերքում թաքնված ռեզերվները և ոչ թե ոտնատակ տալ դրանք։ Վատ չէ, որովհետև նա մեր տնտեսավարներին սովորեցնում է սիստեմատիկաբար բարելավել արտադրության մեթոդները, իջեցնել արտադրության ինքնարժեքը, իրականացնել տնտեսական հաշվարկը և հասնել ձեռնարկությունների եկամտաբերության։ Դա լավ պրակտիկ դպրոց է, որը արագացնում է մեր տնտեսական կադրերի աճումը և սոցիալիստական արտադրության իսկական ղեկավարներ դառնալը՝ պարգացման այժմյան էտապում։

Ցավն այն չէ, որ արժեքի օրենքը մեզանում ներգործում է արտադրության վրա։ Ցավն այն է, որ մեր տնտեսավարները և պլանավիկները, սակավ բացառությամբ, լավ ծանոթ չեն արժեքի օրենքի գործողություններին, չեն ուսումնասիրում դրանք և չեն կարողանում նկատի առնել դրանք իրենց հաշվարկումներում։ Դրանով էլ հենց բացատրվում է այն խառնաշփոթությունը, որը մեկանում ոեռևս տիրում է գների քաղաքականության հարցում։ Ահա բազմաթիվ օրինակներից մեկը։ Սրանից մի որոշ ժամանակ առաջ որոշվել էր բամբակի և հացահատիկի գների հարաբերակցությունը կարգավորել հօգուտ բամբակագործության, ճշտել բամբակագործներին վճարվող հացահատիկի գները և բարձրացնել պետությանը հանձնվող բամբակի գները։ Այս կապակցությամբ մեր տնտեսավարներն ու պլանավիկները մի առաջարկություն մտցրին, որը չէր կարող չզարմացնել Կենտկոմի անդամներին, որովհետև ըստ այդ առաջարկության մեկ տոննա հացահատիկի համար համարյա այնքան դին էր առաջադրվում, որքան մեկ տոննա բամբակի դինն էր, ընդ որում մեկ տոննա հացահատիկի գինը հավասարեցված էր մեկ տոննա թխած հացի գնին։ Կենտկոմի անդամների այն դիտողություններին, որ մեկ տոննա թխած հացի դինը պետք է բարձր լինի մեկ տոննա հացահատիկի գնից՝ աղալու և թխելու լրացուցիչ ծախսերի պատճառով, որ բամբակն ընդհանրապես շատ ավելի թանկ արժե, քան հացահատիկը, որի մասին վկայում են նաև բամբակի և հացահատիկի համաշխարհային գները, առաջարկության հեղինակները ոչ մի խելամիտ պատասխան չկարողացան տալ։ Ուստի և հարկ եղավ, որ Կենտկոմը իր ձեռքը վերցնի այդ գործը, իջեցնի հացահատիկի գները և բարձ-

բացնի բամբակի դները։ Ի՞նչ կլիներ, եթե այդ ընկերների առաջարկությունն օրինական ուժ ստանար։ Մենք կքայքայեինք բամբակագործներին և կմնայինք առանց բամբակի։

Բայց արդյոք այս ամենը նշանակո՞ւմ է, թե արժեքի օրենքի գործողությունները մեզանում նույնքան լայն ասպարեզ ունեն, որքան կապիտալիզմի ժամանակ, թե արժեքի օրենքը մեզանում արտադրության կարգավորիչ է։ Ո՛չ, չի նշանակում։ Իրականում արժեքի օրենքի գործողության ոլորտը մեր տնտեսակարգի պայմաններում խիստ սահմանափակված է և դրված է շրջանակների մեջ։ Արդեն ասվել է, որ ապրանքային արտադրության գործողության ոլորտը մեր հասարակարգում սահմանափակված է և դրված շրջանակների մեջ։ Նույնը պետք է ասել արժեքի օրենքի գործողության ոլորտի մասին։ Անտարակույս է, որ արտադրության միջոցների մասնավոր սեփականության բացակայությունը և արտադրության միջոցների հանրայնացումը, ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում չեն կարող չսահմանափակել արժեքի օրենքի գործողության ոլորտը և արտադրության վրա նրա ներգործության աստիճանը։

Այդ նույն ուղղությամբ է գործում ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման օրենքը, որը փոխարինել է կոնկուրենցիայի և արտադրության անարխիայի օրենքին։

Այդ նույն ուղղությամբ են գործում մեր տարեկան և հնգամյա պլանները և ընդհանրապես մեր ամբողջ տնտեսական քաղաքականությունը, որոնք հենվում են ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի պահանջների վրա։

Այս ամենը միասին հանգեցնում է այն բանին, որ արժեքի օրենքի գործողության ոլորտը մեզանում խիստ սահմանափակված է և մեր հասարակարգում արժեքի օրենքը չի կարող արտադրության կարգավորիչի դեր խաղալ։

Հենց դրանով էլ բացատրվում է այն՝ «ապշեցուցիչ» փաստը, որ, չնայած մեր սոցիալիստական արտադրության անընդհատ և բուռն աճմանը, արժեքի օրենքը մեզանում չի տանում դեպի դերարտադրության ճգնաժամեր, մինչդեռ արժեքի այդ նույն օրենքը, որը կապիտալիզմի պայմաններում գործողության լայն ոլորտ ունի, չնայած արտադրության աճման ցածր տեմպերին կապիտալիստական երկրներում,— տանում է դեպի դերարտադրության պարբերական ճգնաժամեր։

Ասում են, թե արժեքի օրենքը մշտական օրենք է՝ պարտադիր պատմական զարգացման բոլոր ժամանակաշրջանների համար, որ եթե արժեքի օրենքը, որպես փոխանակային հարաբերությունների կարգավորիչ, կորցնի էլ իր ուժը կոմունիստական հասարակարգի երկրորդ փուլի ժամանակաշրջանում, ապա նա զարգացման այդ փուլում կպահպանի իր ուժը որպես արտադրության տարբեր ճյուղերի միջև հարաբերությունների կարգավորիչ, որպես արտադրության ճյուղերի միջև աշխատանքի բաշխման կարգավորիչ։

Դա միանգամայն սխալ է։ Արժեքը, ինչպես և արժեքի օրենքը, պատմական կատեգորիա է՝ կապված ապրանքային արտադրության գոյության հետ։ Ապրանքային արտադրության անհետացման հետ մեկտեղ կանհետանան թե՛ արժեքն իր ձևերով և թե՛ արժեքի օրենքը։

Կոմունիստական հասարակարգի երկրորդ փուլում արդյունքների արտադրության վրա ծախսված աշխատանքի բանակը կչափվի ո՛չ թե զարտուղի հանապարհով, ո՛չ թե արժեքի և նրա ձևերի միջոցով, ինչպես այդ լինում է

ապրանքային արտադրության ժամանակ, այլ ուղղակի և անմիջական կերպով— ժամանակի քանակով, արդյունքների արտադրության վրա ծախսված ժամերի քանակով։ Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի բաշխմանը, ապա արտադրության ճյուղերի միջև աշխատանքի բաշխումը կկարգավորվի ո՛չ թե արժեքի օրենքով, որն այդ ժամանակ կորցրած կլինի իր ուժը, այլ արդյունքների նկատմամբ հասարակության պահանջմունքների աճմամբ։ Դա կլինի մի հասարակություն, որտեղ արտադրությունը կկարգավորվի հասարակության պահանջմունքներով, իսկ հասարակության պահանջմունքների հաշվառումը առաջնակարգ նշանակություն ձեռք կբերի պլանավորող օրգանների համար։

Բոլորովին ճիշտ չէ նաև այն պնդումը, թե մեր այժմյան տնտեսակարգի պայմաններում, կոմունիստական հասարակարգի զարգացման առաջին փուլում, արժեքի օրենքն իբր թե կարգավորում է արտադրության տարբեր ճյուղերի միջև աշխատանքի բաշխման «պրոպորցիաները»։

Եթե դա ճիշտ լիներ, ապա անհասկանալի է, թե ինչո՞ւ մեզանում լայնորեն չեն կարգացնում թեթև արդյունաբերությունը, որպես ավելի եկամտաբեր, առավելապես ծանր արդյունաբերության հանդեպ, որը հաճախ նվազ եկամտաբեր է, իսկ երբեմն էլ ամենևին եկամտաբեր չէ։

Եթե դա ճիշտ լիներ, ապա անհասկանալի է, թե ինչո՞ւ մեզանում չեն փակում ծանր արդյունաբերության մի շարք դեռևս ոչ-եկամտաբեր ձեռնարկությունները, որտեղ բանվորների աշխատանքը «հարկ եղած էֆեկտը» չի տալիս, և չեն բացում անպայմանորեն եկամտաբեր թեթև արդյունաբերության նոր ձեռնարկություններ, որտեղ բանվորների աշխատանքը կարող է «ավելի մեծ էֆեկտ» տալ։

Եթե դա ճիշտ լիներ, ապա անհասկանալի է, թե ինչո՞ւ մեզանում սակավ եկամտաբեր, թեև ժողովրդական տնտեսության համար շատ կարևոր ձեռնարկություններից բանվորներին չեն տեղափոխում ավելի եկամտաբեր ձեռնարկությունները՝ համաձայն արժեքի օրենքի, որն իբր թե կարգավորում է արտադրության ճյուղերի միջև աշխատանքի բաշխման «պրոպորցիաները»։

Ակնհայտ է, որ գնալով այդ ընկերների հետքերով, մենք ստիպված կլինենք հրաժարվելու արտադրության միջոցների արտադրության առաջնությունից հօգուտ սպառման միջոցների արտադրության։ Իսկ ի՞նչ է նշանակում հրաժարվել արտադրության միջոցների արտադրության առաջնությունից։ Դա նշանակում է ոչնչացնել մեր ժողովրդական տնտեսության անընդհատ աճման հնարավորությունը, որովհետև անհնարին է իրականացնել ժողովրդական տնտեսության անընդհատ աճումը, դրա հետ մեկտեղ չիրականացնելով արտադրության միջոցների արտադրության առաջնությունը։

Այդ ընկերները մոռանում են, որ արժեքի օրենքը կարող է արտադրության կարգավորիչ լինել միայն կապիտալիզմի ժամանակ, արտադրության միջոցների մասնավոր սեփականության առկայության պայմաններում, կոնկուրենցիայի, արտադրության անարխիայի, գերարտադրության ճգնաժամերի առկայության պայմաններում։ Նրանք մոռանում են, որ արժեքի օրենքի գործողության ոլորտը մեզանում սահմանափակված է արտադրության միջոցների հանրային սեփականության առկայությամբ, ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի գործողությամբ,— հետևապես, սահմանափակված է նաև մեր տարեկան ու հնգամյա պլաններով, որոնք այս օրենքի պահանջների մոտավոր արտացոլումն են։

Որոշ ընկերներ այստեղից այն հետևությունն են անում, թե ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքը և ժողովրդական տնտեսության պլանավորումը ոչնչացնում են արտադրության եկամտաբերության սկզբունքը։ Դա բոլորովին սխալ է։ Իսկ և իսկ հակառակը։ Եթե եկամտաբերությունը վերցնենք ո՛չ թե առանձին ձեռնարկությունների կամ արտադրության ճյուղերի տեսակետից և ո՛չ էլ մեկ տարվա առումով, այլ ամբողջ ժողովրդական տնտեսության տեսակետից և, ասենք, 10—15 տարվա առումով, որը միակ ճիշտ մոտեցումը կլիներ հարցին, ապա առանձին ձեռնարկությունների կամ արտադրության ճյուղերի ժամանակավոր ու անկայուն եկամտաբերությունը ոչ մի կերպ չի կարող համեմատվել կայուն ու հաստատուն եկամտաբերության այն բարձրագույն ձևի հետ, որպիսին մեզ տալիս են ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի գործողությունները և ժողովրդական տնտեսության պլանավորումը, ազատ պահելով մեզ պարբերական տնտեսական ճգնաժամերից, որոնք քայքայում են ժողովրդական տնտեսությունը և վիթխարի նյութական վնաս են հասցնում հասարակությանը, և մեզ համար ապահովելով ժողովրդական տնտեսության անընդհատ աճումը իր բարձր տեմպերով։

Կարճ ասած՝ տարակույս չի կարող լինել, որ արտադրության մեր այժմյան սոցիալիստական պայմաններում արժեքի օրենքը չի կարող «պրոպորցիաների կարգավորիչ» լինել արտադրության տարբեր ճյուղերի միջև աշխատանքի բաշխման գործում։

## 4. ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ, ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Այս վերնագիրը շոշափում է միմյանցից էապես տարբեր մի շարք պրոբլեմներ, սակայն ես դրանք միավորում եմ մի գլխում ո՛չ թե նրա համար, որ դրանք խառնեմ իրար, այլ բացառապես շարադրման կարճառոտության համար։

Քաղաքի և գյուղի միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև եղած հակադրության ոչնչացման պրոբլեմը հայտնի պրոբլեմ է, որ վաղուց արդեն դրել են Մարքսը և Էնգելսը։ Այդ հակադրության տնտեսական հիմքը գյուղի շահագործումն է քաղաքի կողմից, գյուղացիության էքսպրոպրիացիան է և գյուղական բնակչության մեծամասնության քայքայումը կապիտալիզմի ժամանակ արդյունաբերության, առևտրի, վարկային սիստեմի զարգացման ամբողջ ընթացքով։ Ուստի կապիտալիզմի ժամանակ քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունը պետք է գիտել որպես շահերի հակադրություն։ Այդ հողի վրա է առաջացել գյուղի թշնամական վերաբերմունքը դեպի քաղաքը և ընդհանրապես դեպի «քաղաքի մարդիկ»։

Անտարակույս է, որ կապիտալիզմի և շահագործման սիստեմի ոչնչացումով, մեր երկրում սոցիալիստական հասարակարգի ամրապնդումով պետք է որ անհետանար նաև շահերի հակադրությունը քաղաքի և գյուղի միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։ Դա այդպես էլ եղավ։ Սոցիալիստական քաղաքի կողմից, մեր բանվոր դասակարգի կողմից մեր գյուղացիությանը ցույց տրված հսկայական օգնությունը կալվածատերերի ու կու-

լակության լիկվիդացման գործում ամրապնդեց հողը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի համար, իսկ գյուղացիությանը և նրա կոլտնտեսություններին սիստեմատիկ կերպով առաջնակարգ տրակտորներ և այլ մեքենաներ մատակարարելը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը վերածեց բարեկամության նրանց միջև։ Իհարկե, բանվորները և կոլտնտեսային գյուղացիությունը այնուամենայնիվ կազմում են իրենց դրությամբ իրարից տարբերվող երկու դասակարգեր։ Բայց այդ տարբերությունը ամենևին չի թուլացնում նրանց բարեկամությունը։ Ընդհակառակը, նրանց շահերն ունեն մեկ ընդհանուր ուղղություն՝ սոցիալիստական հասարակարգի ամրապնդման և կոմունիզմի հաղթանակի ուղղություն։ Ուստի և զարմանալի չէ, որ քաղաքի նկատմամբ գյուղի ունեցած երբեմնի անվստահության, առավել ևս առեղության հետքն անգամ չի մնացել։

Այս ամենը նշանակում է, որ մեր այժմյան սոցիալիստական հասարակարգը արդեն վերացրել է քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև հակադրության հողը։

Դա, իհարկե, չի նշանակում, թե քաղաքի և գյուղի միջև եղած հակադրության ոչնչացումը պետք է տանի դեպի «մեծ քաղաքների կործանում» (տե՛ս Էնգելսի «Անտի-Դյուրինգ»-ը)։ Մեծ քաղաքները ո՛չ միայն չեն կործանվի, այլև գեռ երևան կգան նոր մեծ քաղաքներ, որպես կուլտուրայի առավել աճման կենտրոններ, որպես ո՛չ միայն մեծ ինդուստրիայի, այլև գյուղատնտեսական մթերքների վերամշակման և սննդի արդյունաբերության բոլոր ճյուղերի հզոր զարգացման կենտրոններ։ Այդ հանգամանքը կհեշտացնի երկրի կուլտուրական ծաղկումը և կհասցնի կենցաղի պայմանների հավասարմանը քաղաքում և գյուղում։

Համանման դրության մեջ է մեզանում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրության ոչնչացման պրոբլեմը։ Այդ պրոբլեմը նույնպես հայտնի պրոբլեմ է, որ վաղուց գրել են Մարքսը և Էնգելսը։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրության տնտեսական հիմքը ֆիզիկական աշխատանք կատարող մարդկանց շահագործումն է մտավոր աշխատանքի ներկայացուցիչների կողմից։ Բոլորին հայտնի է այն ճեղքվածքը, որ կապիտալիզմի ժամանակ գոյություն ունի ձեռնարկությունների ֆիզիկական աշխատանք կատարող մարդկանց և ղեկավարող անձնակազմի միջև։ Հայտնի է, որ այդ ճեղքվածքի բազայի վրա զարգանում էր բանվորների թշնամական վերաբերմունքը դեպի դիրեկտորը, դեպի վարպետը, դեպի ինժենները և տեխնիկական անձնակազմի մյուս ներկայացուցիչները, որպես դեպի իրենց թշնամիները։ Հասկանալի է, որ կապիտալիզմի և շահագործման սիստեմի ոչնչացումից հետո պետք է որ անհետանար նաև ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև եղած շահերի հակադրությունը։ Եվ այդ հակադրությունը իսկապես անհետացավ մեր ժամանակակից սոցիալիստական հասարակարգի պայմաններում։ Այժմ ֆիզիկական աշխատանք կատարող մարդիկ և ղեկավարող անձնակազմը ո՛չ թե թշնամիներ են, այլ մտերիմ ընկերներ, մի միասնական արտադրական կոլեկտիվի անդամներ, որոնք խորապես շահագրգռված են արտադրության առաջադիմության ու բարելավման գործում։ Նրանց միջև եղած երբեմնի թշնամության հետքն անգամ չի մնացել։

Բոլորովին այլ բնույթ ունի քաղաքի (արդյունաբերության) և գյուղի (գյուղատնտեսության) միջև, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև

եղած տարբերությունների անհետացման պրոբլեմը։ Այդ պրոբլեմը դրված չի եղել մարքսիզմի կլասիկների կողմից։ Դա նոր պրոբլեմ է, որ դրել է մեր սոցիալիստական շինարարության պրակտիկան։

Արդյոք մտացածին չէ՞ այս պրոբլեմը, արդյոք նա ունի՞ որևէ պրակտիկ կամ թեորիական նշանակություն մեզ համար։ Ո՛չ, այս պրոբլեմը չի կարելի մտացածին համարել։ Ընդհակառակը, նա մեզ համար վերին աստիճանի լուրջ պրոբլեմ է։

Եթե վերցնենք, օրինակ, գյուղատնտեսության և արդյունաբերության միջև եղած տարբերությունը, ապա դա մեզ մոտ հանգում է ոչ միայն այն բանին, որ գյուղատնտեսության մեջ աշխատանքի պայմանները տարբերվում են արդյունաբերության մեջ եղած աշխատանքի պայմաններից, այլև ամենից առաջ և գլխավորապես այն բանին; որ արդյունաբերության մեջ մենք ունենք արտադրության միջոցների և արտադրության արտադրանքի համաժողովրդական սեփականություն, այնինչ գյուղատնտեսության մեջ ունենք ոչ թե համաժողովրդական, այլ խմբային, կոլտնտեսային սեփականություն։ Արդեն ասվել է, որ այդ հանգամանքի հետևանքով պահպանվում է ապրանքային շրջանառությունը, որ արդյունաբերության և գյուղատնտեսության միջև եղած այդ տարբերության անհետացումից հետո միայն կարող է անհետանալ ապրանքային արտադրությունը այստեղից բխող բոլոր հետևանքներով։ Հետևապես, չի կարելի ժխտել, որ գյուղատնտեսության և արդյունաբերության միջև եղած այդ էական տարբերության անհետացումը պետք է առաջնակարգ նշանակություն ունենա մեզ համար։

Նույնը պետք է ասել մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերության ոչնչացման պրոբլեմի մասին։ Այդ պրոբլեմը նույնպես առաջնակարգ նշանակություն ունի մեզ համար։ Մինչև մասսայական սոցմրցման ծավալման սկիզբը մեր արդյունաբերությունը դժվարություններով էր աճում և շատ ընկերներ նույնիսկ գնում էին արդյունաբերության զարգացման տեմպերի դանդաղեցման հարցը։ Դա բացատրվում էր գլխավորապես նրանով, որ բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակը խիստ ցածր էր և շատ էր ետ մնում տեխնիկական անձնակազմի մակարդակից։ Սակայն, բանն արմատապես փոխվեց այն բանից հետո, երբ սոցմրցումը մասսայական բնույթ ընդունեց մեզ մոտ։ Հատկապես դրանից հետո արդյունաբերությունը առաջ ընթացավ արագ տեմպերով։ Ինչո՞ւ սոցմրցումը մասսայական բնույթ ընդունեց։ Որովհետև բանվորների մեջ դանվեցին ընկերների ամբողջ խմբեր, որոնք ոչ միայն յուրացրին տեխնիկական մինիմումը, այլև ավելի առաջ գնացին, հասան տեխնիկական անձնակազմի մակարդակին, սկսեցին ուղղել տեխնիկներին և ինժեներներին, ջարդել գոյություն ունեցող նորմաները որպես հնացած նորմաներ, մտցնել նոր, ավելի ժամանակակից նորմաներ և այլն։ Ի՞նչ կլիներ, եթե ոչ թե բանվորների առանձին խմբեր, այլ բանվորների մեծամասնությունը իր կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացներ մինչև ինժեներա-տեխնիկական անձնակազմի մակարդակը։ Մեր արդյունաբերությունը կհասցվեր մյուս երկրների արդյունաբերության համար անհասանելի մի բարձրության։ Հետևապես, չի կարելի ժխտել, որ մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերության ոչնչացումը՝ բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակը մինչև

տեխնիկական անձնակազմի մակարդակը բարձրացնելու միջոցով, չի կարող առաջնակարգ նշանակություն չունենալ մեզ համար։

Որոշ ընկերներ պնդում են, թե ժամանակի ընթացքում կանհետանա ո՛չ միայն արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած էական տարբերությունը, այլև կանհետանա նրանց միջև ամեն տեսակ տարբերություն։ Դա ճիշտ չէ։ Արդյունաբերության և գյուղատնտեսության միջև եղած էական տարբերության ոչնչացումը չի կարող հասցնել նրանց միջև եղած ամեն մի տարբերության ոչնչացմանը։ Մի ինչ-որ տարբերություն, թեպետև ոչ-էական, անպայմանորեն կմնա արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատանքի պայմաններում եղած տարբերությունների պատճառով։ Նույնիսկ արդյունաբերության մեջ, եթե նկատի ունենանք նրա տարբեր ճյուղերը, աշխատանքի պայմանները միատեսակ չեն ամենուրեք. օրինակ՝ հանքագործների աշխատանքի պայմանները տարբերվում են կոշիկի մեքենայացված գործարանի բանվորների աշխատանքի պայմաններից, հանքափոր բանվորների աշխատանքի պայմանները տարբերվում են մեքենաշինարար բանվորների աշխատանքի պայմաններից։ Եթե դա ճիշտ է, ապա առավել ևս պետք է որոշ տարբերություն պահպանվի արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։

Նույնը պետք է ասել մտավոր աշխատանքի և ֆիզիկական աշխատանքի միջև եղած տարբերության մասին։ Նրանց միջև կուլտուր-տեխնիկական մակարդակում ճեղքվածքի իմաստով եղած էական տարբերությունը անպայման կանհետանա։ Բայց մի ինչ-որ տարբերություն, թեպետև ոչ-էական, այնուամենայնիվ կպահպանվի թեկուզ հենց այն պատճառով, որ ձեռնարկությունների ղեկավար կազմի աշխատանքի պայմանները և բանվորների աշխատանքի պայմանները միատեսակ չեն։

Հակառակը պնդող ընկերները, երևի, հենվում են իմ մի քանի ելույթներում եղած այն հայտնի ձևակերպման վրա, որտեղ խոսվում է արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած տարբերության ոչնչացման մասին, առանց վերապահելու այն, որ խոսքը վերաբերում է էական և ոչ թե ամեն տեսակ տարբերության ոչնչացմանը։ Ընկերները հենց այդպես էլ հասկացել են իմ ձևակերպումը, ենթադրելով, թե դա նշանակում է ամեն տեսակ տարբերության ոչնչացում։ Բայց դա նշանակում է, որ ձևակերպումը ճշգրիտ չի եղել, անբավարար է եղել։ Հարկավոր է դեն նետել այն և փոխարինել ուրիշ ձևակերպումով, որը խոսի արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների ոչնչացման և ոչ-էական տարբերությունների պահպանման մասին։

## 5. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՐՈՀՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՀԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի և նրա տնտեսական հետևանքների ամենից ավելի կարևոր տնտեսական արդյունքը պետք է համարել միասնական համապարփակ համաշխարհային շուկայի տրոհումը։ Այդ հանգամանքը որոշեց համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացումը։

Երկրորդ համաշխարհային պատերազմը հենց այդ ճգնաժամի ծնունդն էր։ Պատերազմի ժամանակ իրար օձիքից բռնած կապիտալիստական երկու կոալիցիաներից ամեն մեկը հույս ուներ ջախջախելու հակառակորդին և հասնելու համաշխարհային տիրապետության։ Նրանք դրա մեջ էին ելք փնտրում ճգնաժամից։ Ամերիկայի Միացյալ Նահանգները հույս ունեին շարքից հանելու իրենց առավել վտանգավոր մրցակիցներին՝ Գերմանիային և Յապոնիային, զավթելու արտասահմանյան շուկաները, հումքի համաշխարհային ռեսուրսները և հասնելու համաշխարհային տիրապետության։

Սակայն պատերազմը շարդարացրեց այդ հույսերը։ Ճիշտ է, Գերմանիան և Յապոնիան, որպես կապիտալիստական երեք գլխավոր երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի մրցակիցներ, շարքից հանվեցին։ Բայց դրա հետ մեկտեղ կապիտալիստական սիստեմից անջատվեցին Չինաստանը և մյուս ժողովրդա-դեմոկրատական երկրները Եվրոպայում, Սովետական Միության հետ միասին կազմելով մի միասնական և հզոր սոցիալիստական լագեր, որը հակադիր է կապիտալիզմի լագերին։ Երկու հակադիր լագերների գոյության տնտեսական հետևանքն այն եղավ, որ միասնական համապարփակ համաշխարհային շուկան տրոհվեց, որի հետևանքով ներկայումս ունենք երկու զուգահեռ, նույնպես միմյանց հակադիր համաշխարհային շուկաներ։

Պետք է նշել, որ ԱՄՆ-ը և Անգլիան Ֆրանսիայի հետ միասին հենց իրենք, իհարկե, իրենց կամքից անկախ նպաստեցին համաշխարհային նոր զուգահեռ շուկայի գոյացմանը և ամրապնդմանը։ Նրանք տնտեսական բլոկադայի ենթարկեցին ՍՍՌՄ-ն, Չինաստանը և եվրոպական ժողովրդա-դեմոկրատական երկրները, որոնք չեն մտել «Մարշալլի պլան»-ի սիստեմի մեջ, մտածելով դրանով խեղդամահ անել նրանց։ Իրականում ստացվեց ո՛չ թե խեղդամահություն, այլ նոր համաշխարհային շուկայի ամրապնդում։

Այնուամենայնիվ, այս գործում հիմնականը, իհարկե, տնտեսական բլոկադան չէ, այլ այն, որ պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում այս երկրները տնտեսապես շաղկապվեցին և կազմակերպեցին տնտեսական համագործակցություն ու փոխադարձ օգնություն։ Այդ համագործակցության փորձը ցույց է տալիս, որ ոչ մի կապիտալիստական երկիր չէր կարող այնպիսի իրական և տեխնիկապես որակյալ օգնություն ցույց տալ ժողովրդա-դեմոկրատական երկրներին, որպիսին նրանց ցույց է տալիս Սովետական Միությունը։ Բանը ոչ միայն այն է, որ այդ օգնությունը առավել էժան և տեխնիկապես առաջնակարգ օգնություն է։ Բանն ամենից առաջ այն է, որ այդ համագործակցության հիմքում դրված է մեկը մյուսին օգնելու և ընդհանուր տնտեսական վերելք ձեռք բերելու անկեղծ ցանկությունը։ Դրա հետևանքով արդյունաբերությունն այժմ բարձր տեմպերով է զարգանում այդ երկրներում։ Կարելի է վստահ կերպով ասել, որ արդյունաբերության զարգացման այդպիսի տեմպերի առկայությամբ բանը շուտով այնտեղ կհասնի, որ այդ երկրները ո՛չ միայն կարիք չեն զգա ապրանքների ներմուծման կապիտալիստական երկրներից, այլև իրենք անհրաժեշտություն կզգան արտահանելու իրենց արտադրության ավելցուկ ապրանքները։

Բայց դրանից հետևում է, որ համաշխարհային ռեսուրսների նկատմամբ կապիտալիստական գլխավոր երկրների (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա) ուժերի դործադրման ոլորտը ո՛չ թե ընդլայնվելու է, այլ կրճատվելու է, որ վաճառահանման համաշխարհային շուկայի պայմանները վատանալու են այդ երկրնե-

րի համար, իսկ ձեռնարկությունների թերբեռնվածությունը այդ երկրներում ավելանալու է։ Իսկապես ասած, հենց դրանով է արտահայտվում համաշխարհային շուկայի տրոհման առնչությամբ համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի խորացումը։

Այդ բանը զգում են իրենք՝ կապիտալիստները, որովհետև դժվար է չզգալ այնպիսի շուկաների կորուստը, ինչպես ՍՍՌՄ-ն, Չինաստանը։ Նրանք աշխատում են այդ դժվարությունները հաղթահարել «Մարշալլի պլան»-ով, Կորեայում մղվող պատերազմով, սպառազինման մրցավազքով, արդյունաբերության ռազմականացումով։ Բայց դա շատ է նման այն բանին, որ խեղդվողները ձեռքը ծղոտին են դցում։

Այդ դրության կապակցությամբ տնտեսագետների առաջ ծառացան երկու հարց՝

ա) Արդյոք կարելի՞ է պնդել, թե կոսմիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանում շուկաների հարաբերական կայունության վերաբերյալ Ստալինի հայտնի թեզիսը, որը նա երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ էր արտահայտել, դեռևս մնում է ուժի մեջ։

բ) Արդյոք կարելի՞ է պնդել, որ Լենինի 1916 թվականի գարնանը արտահայտած այն հայտնի թեզիսը, թե, չնայած կապիտալիզմի նեխմանը, «կապիտալիզմն ամբողջությամբ վերցրած աճում է անչափ ավելի արագ կերպով, քան առաջ», դեռևս մնում է ուժի մեջ։

Ես կարծում եմ, որ այդ չի կարելի պնդել։ Երկրորդ համաշխարհային պատերազմի կապակցությամբ առաջացած նոր պայմանների պատճառով այդ երկու թեզիսն էլ պետք է ուժը կորցրած համարել։

## 6. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Որոշ ընկերներ պնդում են, թե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային նոր պայմանների զարգացման պատճառով պատերազմները կապիտալիստական երկրների միջև դադարել են անխուսափելի լինելուց։ Նրանք գտնում են, թե հակասությունները սոցիալիզմի լագերի և կապիտալիզմի լագերի միջև ավելի ուժեղ են, քան հակասությունները կապիտալիստական երկրների միջև, թե Ամերիկայի Միացյալ Նահանգները բավականաչափ իրենց են ենթարկել մյուս կապիտալիստական երկրներին, որ նրանց թույլ չտան պատերազմելու իրար դեմ և թուլացնելու միմյանց, թե կապիտալիզմի առաջավոր մարդիկ բավականաչափ խրատված են ամբողջ կապիտալիստական աշխարհին լուրջ վնաս հասցրած երկու համաշխարհային պատերազմների փորձից, որ թույլ չտան նորից կապիտալիստական երկրները պատերազմի մեջ ներքաշելու միմյանց դեմ,— թե այդ ամենի պատճառով պատերազմները կապիտալիստական երկրների միջև դադարել են անխուսափելի լինելուց։

Այդ ընկերները սխալվում են։ Նրանք տեսնում են արտաքին, մակերեսի վրա մեկ-մեկ երևացող երևույթները, բայց նրանք չեն տեսնում այն խոր ուժերը, որոնք թեպետև առայժմ աննկատելի են գործում, բայց այնուամենայնիվ կորոշեն իրադարձությունների ընթացքը։

Արտաքուստ ամեն ինչ կարծես «բարեհաջող» է. Ամերիկայի Միացյալ Նահանգները պայոկի են կապել Արևմտյան Եվրոպային, Յապոնիային և

մյուս կապիտալիստական երկրներին. Գերմանիան (Արևմտյան), Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Յապոնիան, որ ընկել են ԱՄՆ-ի ոանկը, ոլու-հնաղանդ կատարում են ԱՄՆ-ի հրամանները։ Բայց ճիշտ չէր լինի կարծել, թե այդ «բարեհաջողությունը» կարող է պահպանվել «հավիտյանս հավիտենից», թե այդ երկրները անվերջ կհանդուրժեն Ամերիկայի Միացյալ Նահանգների տիրապետությունն ու ճնշումը, թե նրանք չեն փորձի ազատվելու ամերիկյան ստրկությունից և ոտք դնելու ինքնուրույն զարգացման ուղին։

Վերցնենք ամենից առաջ Անգլիան և Ֆրանսիան։ Անկասկած է, որ այդ երկրները իմպերիալիստական երկրներ են։ Անկասկած է, որ էժան հումքը և վաճառահանման ապահովված շուկաները առաջնակարգ նշանակություն ունեն նրանց համար։ Կարելի՞ է կարծել, թե նրանք անվերջ կհանդուրժեն այժմյան դրությունը, երբ ամերիկացիները, «Մարշալի պլանի» գծով տրվող «օգնության» աղմուկի տակ հիմնավորվում են Անգլիայի և Ֆրանսիայի էկոնոմիկայի մեջ, աշխատելով այն դարձնել Ամերիկայի Միացյալ Նահանգների էկոնոմիկայի կցորդ, երբ ամերիկյան կապիտալը գավթում է հումքը և վաճառահանման շուկաները անգլո-ֆրանսիական դաղութներում և դրանով իսկ կատաստրոֆ են պատրաստում անգլո-ֆրանսիական կապիտալիստների բարձր շահույթների համար։ Արդյո՞ք ավելի ճիշտ չի լինի ասել, որ կապիտալիստական Անգլիան, նրա հետևից էլ կապիտալիստական Ֆրանսիան վերջիվերջո հարկադրված կլինեն ազատվել ԱՄՆ-ի դրկից և կոնֆլիկտի մեջ մտնել նրանց դեմ՝ իրենց համար ինքնուրույն դրություն և, իհարկե, բարձր շահույթներ ապահովելու համար։

Անցնենք գլխավոր պարտված երկրներին՝ Գերմանիային (Արևմտյան), Յապոնիային։ Այդ երկրները այժմ ողորմելի դոյություն են քարշ տալիս ամերիկյան իմպերիալիզմի կրնկի տակ։ Նրանց արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, նրանց առևտուրը, նրանց արտաքին և ներքին քաղաքականությունը, նրանց ամբողջ կենցաղը կաշկանդված են օկուպացիայի ամերիկյան «ռեժիմով»։ Բայց չէ՞ որ դեռ երեկ այդ երկրները իմպերիալիստական մեծ տերություններ էին, որոնք սասանում էին Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի տիրապետության հիմքերը Եվրոպայում, Ասիայում։ Կարծել, թե այդ երկրները փորձ չեն անի նորից ոտքի ելնելու, փշրելու ԱՄՆ-ի «ռեժիմը» և դուրս պրծնելու դեպի ինքնուրույն զարգացման ուղին— նշանակում է հավատալ հրաշքների։

Ասում են, թե հակասությունները կապիտալիզմի և սոցիալիզմի միջև ավելի ուժեղ են, քան հակասությունները կապիտալիստական երկրների միջև։ Թեորիապես, դա, իհարկե, ճիշտ է։ Դա ճիշտ է ո՛չ միայն այժմ՝ ներկա ժամանակներում,— դա ճիշտ էր նաև երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ։ Եվ այդ բանը ավելի կամ պակաս չափով հասկանում էին կապիտալիստական երկրների ղեկավարները։ Այնուամենայնիվ, երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվեց ո՛չ թե ՍՍՌՄ-ի դեմ պատերազմով, այլ կապիտալիստական երկրների միջև մղվող պատերազմով։ Ինչո՞ւ։ Որովհետև, նախ, պատերազմը ՍՍՌՄ-ի, որպես սոցիալիզմի երկրի դեմ՝ ավելի վտանգավոր է կապիտալիզմի համար, քան պատերազմը կապիտալիստական երկրների միջև, որովհետև, եթե պատերազմը կապիտալիստական երկրների միջև դնում է միայն այսինչ կապիտալիստական երկրների գերակշռության հարցը մյուս կապիտալիստական երկրների նկատմամբ, ապա պատերազմը ՍՍՌՄ-ի դեմ

անպայմանորեն պետք է դնի իր իսկ կապիտալիզմի գոյության հարցը։ Որովհետև, երկրորդ, կապիտալիստները, թեև «պրոպագանդայի» նպատակներով աղմկում են Սովետական Միության ագրեսիվության մասին, իրենք չեն հավատում նրա ագրեսիվությանը, քանի որ նրանք հաշվի են առնում Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը և դիտեն, որ Սովետական Միությունն ինքը չի հարձակվի կապիտալիստական երկրների վրա։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո էլ գտնում էին, թե Գերմանիան վերջնականապես հանված է շարքից, այնպես, ինչպես որոշ ընկերներ այժմ կարծում են, թե Յապոնիան և Գերմանիան վերջնականապես հանված են շարքից։ Այն ժամանակ էլ խոսում և մամուլում աղմկում էին այն մասին, թե Ամերիկայի Միացյալ Նահանգները պայոկի են կապել Եվրոպային, թե Գերմանիան այլևս չի կարող ոտքի կանգնել, թե այսուհետև չպետք է լինեն պատերազմներ կապիտալիստական երկրների միջև։ Սակայն, չնայած դրան, Գերմանիան բարձրացավ և իր պարտությունից ընդամենը 15—20 տարի հետո ոտքի կանգնեց որպես մեծ տերություն, ազատվելով ստրկությունից և ոտք դնելով ինքնուրույն զարգացման ուղին։ Ընդ որում բնորոշ է, որ ոչ այլ ոք, եթե ոչ Անգլիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները օգնեցին Գերմանիային բարձրանալու տնտեսապես և բարձրացնելու իր ռազմատնտեսական պոտենցիալը։ Օգնելով Գերմանիային բարձրանալու տնտեսապես, ԱՄՆ-ը և Անգլիան, իհարկե, այդ դեպքում նկատի ունեին ոտքի ելած Գերմանիային ուղղել Սովետական Միության դեմ, օգտագործել նրան ընդդեմ սոցիալիզմի երկրի։ Սակայն Գերմանիան իր ուժերը առաջին հերթին ուղղեց անգլո-ֆրանս-ամերիկյան բլոկի դեմ։ Եվ երբ հիտլերյան Գերմանիան պատերազմ հայտարարեց Սովետական Միությանը, անգլո-ֆրանս-ամերիկյան բլոկը ո՛չ միայն չմիացավ հիտլերյան Գերմանիային, այլ, ընդհակառակը, հարկադրված եղավ կոալիցիայի մեջ մտնել ՍՍՌՄ-ի հետ ընդդեմ հիտլերյան Գերմանիայի։

Հետևապես, կապիտալիստական երկրների պայքարը շուկաների համար և իրենց մրցակիցներին խեղդելու ցանկությունը գործնականապես ավելի ուժեղ դուրս եկան, քան հակասությունները կապիտալիզմի լագերի և սոցիալիզմի լագերի միջև։

Հարց է ծագում՝ ի՞նչ երաշխիք կա, որ Գերմանիան և Յապոնիան նորից ոտքի չեն կանգնի, որ նրանք չեն փորձի ազատվելու ամերիկյան ստրկությունից և ապրելու իրենց ինքնուրույն կյանքով։ Ես կարծում եմ, որ այդպիսի երաշխիքներ չկան։

Բայց դրանից հետևում է, որ կապիտալիստական երկրների միջև պատերազմների անխուսափելիությունը ուժի մեջ է մնում։

Ասում են, թե Լենինի այն թեզիսը, որ իմպերիալիզմը անխուսափելիորեն ծնում է պատերազմներ, պետք է համարել հնացած, քանի որ ներկայումս աճել են հզոր ժողովրդական ուժեր, որոնք հանդես են գալիս ի պաշտպանություն խաղաղության, ընդդեմ նոր համաշխարհային պատերազմի։ Դա ճիշտ չէ։

Խաղաղության ժամանակակից շարժումը նպատակ ունի ժողովրդական մասսաներին պայքարի հանել խաղաղությունը պահպանելու համար, նոր համաշխարհային պատերազմը կանխելու համար։ Հետևապես, այդ շարժումը կապիտալիզմը տապալելու և սոցիալիզմ հաստատելու նպատակներ չի հե-

տապնդում,— նա սահմանափակվում է խաղաղության պահպանման համար մղվող պայքարի դեմոկրատական նպատակներով։ Այդ տեսակետից խաղաղության պահպանման ժամանակակից շարժումը տարբերվում է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու համար ծավալված շարժումից, որովհետև այս վերջին շարժումը ավելի հեռու էր գնում և հետապնդում էր սոցիալիստական նպատակներ։

Հնարավոր է, որ, հանգամանքների որոշ բերումով, խաղաղության համար մղվող պայքարը տեղ-տեղ ծավալվի ու վերածվի սոցիալիզմի համար մղվող պայքարի, բայց դա արդեն կլինի ո՛չ թե ժամանակակից շարժումը խաղաղության համար, այլ շարժում՝ կապիտալիզմի տապալման համար։

Ամենից հավանականն այն է, որ խաղաղության ժամանակակից շարժումը, որպես խաղաղության պահպանման շարժում, հաջողության դեպքում կհասցնի տվյալ պատերազմի կանխմանը, նրա ժամանակավոր հետաձգմանը, տվյալ խաղաղության ժամանակավոր պահպանմանը, ռազմատենչ կառավարության հրաժարականին և նրա փոխարինմանը մի ուրիշ կառավարությամբ, որը պատրաստ կլինի ժամանակավորապես պահպանելու խաղաղությունը։ Դա, իհարկե, լավ է։ Նույնիսկ շատ լավ է։ Բայց դա այնուամենայնիվ բավական չէ կապիտալիստական երկրների միջև պատերազմների անխուսափելիությունն ընդհանրապես ոչնչացնելու համար։ Բավական չէ, որովհետև խաղաղության պաշտպանության շարժման այդ բոլոր հաջողություններին առընթեր իմպերիալիզմը այնուամենայնիվ պահպանվում է, ուժի մեջ է մնում,— հետևաբար ուժի մեջ է մնում նաև պատերազմների անխուսափելիությունը։

Պատերազմների անխուսափելիությունը վերացնելու համար հարկավոր է ոչնչացնել իմպերիալիզմը։

## 7. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ինչպես հայտնի է, կապիտալիզմի և սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքների հարցը մի քանի անգամ առաջ քաշվեց դիսկուսիայում։ Այդ հարցի շուրջը հայտնվեցին տարբեր, ընդհուպ մինչև ամենաֆանտաստիկ կարծիքներ։ Ճիշտ է, դիսկուսիայի մասնակիցների մեծամասնությունը թույլ էր արձագանքում դրան, և ոչ մի որոշում չնշվեց այդ մասին։ Սակայն, դիսկուսիայի մասնակիցներից ոչ մեկն էլ չէր ժխտում այդպիսի օրենքների գոյությունը։

Գոյություն ունի՞ արդյոք կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենք։ Այո՛, գոյություն ունի։ Այդ ի՞նչ օրենք է, որո՞նք են նրա բնորոշ գծերը։ Կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը— դա այնպիսի օրենք է, որը որոշում է կապիտալիստական արտադրության զարգացման ո՛չ թե որևէ մի առանձին կողմը կամ որևէ առանձին պրոցեսը, այլ այդ զարգացման բոլոր գլխավոր կողմերը և բոլոր գլխավոր պրոցեսները,— հետևապես, որոշում է կապիտալիստական արտադրության էությունը, նրա բուն էությունը։

Արդյոք արժեքի օրենքը կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը չէ՞։ Ո՛չ։ Արժեքի օրենքը ամենից առաջ ապրանքային արտադրության օրենք

է։ Նա գոյություն է ունեցել կապիտալիզմից առաջ և շարունակում է գոյություն ունենալ, ինչպես և ապրանքային արտադրությունը, կապիտալիզմի տապալումից հետո, օրինակ, մեր երկրում, ճիշտ է՝ գործողության սահմանափակ ոլորտով։ Արժեքի օրենքը, որը գործողության լայն ոլորտ ունի կապիտալիզմի պայմաններում, իհարկե, մեծ դեր է խաղում կապիտալիստական արտադրության զարդացման գործում, բայց նա ո՛չ միայն չի որոշում կապիտալիստական արտադրության էությունը և կապիտալիստական շահույթի հիմքերը, այլև նույնիսկ չի դնում այդպիսի պրոբլեմներ։ Ուստի նա չի կարող ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը լինել։

Այդ նույն նկատառումներով չի կարող կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենք լինել կոնկուրենցիայի և արտադրության անարխիայի օրենքը, կամ տարբեր երկրներում կապիտալիզմի անհամաչափ զարդացման օրենքը։

Ասում են, թե շահույթի միջին նորմայի օրենքը ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքն է։ Դա ճիշտ չէ։ Ժամանակակից կապիտալիզմը, մոնոպոլիստական կապիտալիզմը չի կարող բավարարվել միջին շահույթով, որն առանց այն էլ իջնելու տենդենց ունի կապիտալի օրգանական կազմի բարձրանալու պատճառով։ Ժամանակակից մոնոպոլիստական կապիտալիզմը պահանջում է ո՛չ թե միջին շահույթ, այլ առավելագույն շահույթ, որն անհրաժեշտ է քիչ թե շատ կանոնավոր կերպով ընդլայնված վերարտադրություն իրականացնելու համար։

Կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի հասկացությանը ամենից ավելի մոտենում է հավելյալ արժեքի օրենքը, կապիտալիստական շահույթի ծնման և աճման օրենքը։ Այդ օրենքը իսկապես կանխորոշում է կապիտալիստական արտադրության հիմնական գծերը։ Բայց հավելյալ արժեքի օրենքը չափազանց ընդհանուր օրենք է, որը չի շոշափում շահույթի բարձր նորմայի պրոբլեմները, որպիսի նորմայի ապահովումը մոնոպոլիստական կապիտալիզմի զարդացման պայմանն է։ Այդ բացը լրացնելու համար հարկավոր է կոնկրետացնել հավելյալ արժեքի օրենքը և այն զարդացնել՝ մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններին համեմատ, ըստ որում հաշվի առնելով, որ մոնոպոլիստական կապիտալիզմը պահանջում է ո՛չ թե ամեն տեսակ շահույթ, այլ հատկապես առավելագույն շահույթ։ Հենց այդ էլ կլինի ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը։

Ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի գլխավոր գծերն ու պահանջները կարելի է ձևակերպել մոտավորապես այսպես. կապիտալիստական առավելագույն շահույթի ապահովում՝ տվյալ երկրի բնակչության մեծամասնության շահագործման, քայքայման ու աղքատացման միջոցով, ուրիշ երկրների, հատկապես հետամնաց երկրների ժողովուրդների ստրկացման ու սիստեմատիկ կողոպտման միջոցով, վերջապես, պատերազմների և ժողովրդական տնտեսության ռազմականացման միջոցով, որոնք օգտագործվում են ամենաբարձր շահույթներ ապահովելու համար։

Ասում են, թե միջին շահույթն այնուամենայնիվ կարելի է միանգամայն բավական համարել կապիտալիստական զարդացման համար ժամանակակից պայմաններում։ Դա ճիշտ չէ։ Միջին շահույթը եկամտաբերության այն ստորին սահմանն է, որից ցածր անհնարին է դառնում կապիտալիստական արտադրությունը։ Բայց ծիծաղելի կլիներ կարծել, թե ժամանակակից մոնոպոլիստական կապիտալիզմի պարադլուխները, զավթելով գաղութները, ստրկաց-

նելով ժողովուրդներին և հրահրելով պատերազմներ, աշխատում են սոսկ միջին շահույթ ապահովել իրենց համար։ Ո՛չ, ոչ միջին շահույթը և ոչ էլ գերշահույթը, որը, որպես կանոն, ներկայացնում է ընդամենը միջին շահույթի միայն մի որոշ գերազանցում, այլ հատկապես առավելագույն շահույթն է հանդիսանում մոնոպոլիստական կապիտալիզմի շարժիչը։ Հենց առավելագույն շահույթներ ստանալու անհրաժեշտությունն է մոնոպոլիստական կապիտալիզմին մղում այնպիսի ռիսկոտ քայլերի, ինչպես գաղութների և մյուս հետամնաց երկրների ստրկացումը և սիստեմատիկ կողոպտումը, մի շարք անկախ երկրների վերածումը կախյալ երկրների, նոր պատերազմների կազմակերպումը, որոնք ժամանակակից կապիտալիզմի պարագլուխների համար լավագույն «բիզնես» են հանդիսանում առավելագույն շահույթներ կորզելու համար, վերջապես, համաշխարհային տնտեսական գերիշխանություն նվաճելու փորձերը։

Կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի նշանակությունն ի միջի այլոց այն է, որ նա, որոշելով բոլոր կարևորագույն երևույթները արտադրության կապիտալիստական եղանակի զարգացման բնագավառում, նրա վերելքները և ճգնաժամերը, նրա հաղթանակները և պարտությունները, նրա արժանիքները և թերությունները,— նրա հակասական զարգացման ամբողջ պրոցեսը,— հնարավորություն է տալիս հասկանալու և բացատրելու դրանք։

Ահա բազմաթիվ «ապշեցուցիչ» օրինակներից մեկը։

Բոլորին հայտնի են կապիտալիզմի պատմության և պրակտիկայի այն փաստերը, որոնք ցույց են տալիս տեխնիկայի բուռն զարգացումը կապիտալիզմի ժամանակ, երբ կապիտալիստները հանդես են գալիս որպես առաջավոր տեխնիկայի դրոշակակիրներ, որպես ռևոլուցիոներ արտադրության տեխնիկայի զարգացման բնագավառում։ Բայց հայտնի են նաև այլ կարգի փաստեր, որոնք ցույց են տալիս տեխնիկայի զարգացման դադարեցումը կապիտալիզմի ժամանակ, երբ կապիտալիստները նոր տեխնիկայի զարգացման բնագավառում հանդես են գալիս որպես ռեակցիոներներ և հաճախ անցնում են ձեռքի աշխատանքին։

Ինչո՞վ բացատրել այդ աղաղակող հակասությունը։ Այդ կարելի է բացատրել միայն ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքով, այսինքն՝ առավելագույն շահույթներ ստանալու անհրաժեշտությամբ։ Կապիտալիզմը կողմնակից է նոր տեխնիկային, երբ սա ամենաբարձր շահույթներ է խոստանում նրան։ Կապիտալիզմը դեմ է նոր տեխնիկային և կողմնակից է ձեռքի աշխատանքի անցնելուն, երբ նոր տեխնիկան այլևս ամենաբարձր շահույթներ չի խոստանում։

Այս է, ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի պատկերը։

Գոյություն ունի՞ արդյոք սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենք։ Այո՛, գոյություն ունի։ Որո՞նք են այդ օրենքի էական գծերն ու պահանջները։ Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի էական գծերն ու պահանջները կարելի է բնութագրել մոտավորապես այսպես. ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության անընդհատ աճման ու կատարելագործման միջոցով։

Հետևապես՝ առավելագույն շահույթներ ապահովելու փոխարեն՝ հասարակության նյութական և կուլտուրական պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում, արտադրությունն ընդհատումներով— վերելքից ճգնաժամ և ճգնաժամից վերելք— զարգացնելու փոխարեն՝ արտադրության անընդհատ աճում. տեխնիկայի զարգացման. մեջ ալտերնատիվական ընդհատումների փոխարեն, որոնք ուղեկցվում են հասարակության արտադրողական ուժերի քայքայումով, արտադրության անընդհատ կատարելագործում՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա։

Ասում են, թե սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը ժողովրդական տնտեսության պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացման օրենքն է։ Դա ճիշտ չէ։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացումը, ուրեմն և ժողովրդական տնտեսության պլանավորումը, որն այդ օրենքի ավելի կամ պակաս ճիշտ արտացոլումն է, ինքնին ոչինչ չեն կարող տալ, եթե հայտնի չէ, թե հանուն ի՞նչ խնդրի է կատարվում ժողովրդական տնտեսության պլանային զարգացումը, կամ եթե խնդիրը պարզ չէ։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքը կարող է հարկ եղած էֆեկտը տալ միայն այն դեպքում, երբ կա խնդիր, հանուն որի իրականացման կատարվում է ժողովրդական տնտեսության պլանային զարգացումը։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքն ինքը չի կարող տալ այդ խնդիրը։ Այն առավել ևս չի կարող տալ ժողովրդական տնտեսության պլանավորումը։ Այդ խնդիրը կա սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքում վերը շարադրված նրա պահանջների ձևով։ Ուստի ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի գործողությունները լիակատար ասպարեզ կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ նրանք հենվում են սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի վրա։

Ինչ վերաբերում է ժողովրդական տնտեսության պլանավորմանը, ապա դա կարող է դրական հետևանքների հասնել միայն երկու պայման պահպանելու դեպքում՝ ա) եթե պլանավորումը ճիշտ է արտացոլում ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի պահանջները, բ) եթե նա համապատասխանեցվում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի բոլոր պահանջներին։

## 8. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

1) Արտատնտեսական հարկադրանքի հարցը ֆեոդալիզմի ժամանակ։

Իհարկե, արտատնտեսական հարկադրանքը դեր խաղացել է կալվածատեր-ճորտատերերի տնտեսական իշխանության ամրապնդման գործում, այլապես, ֆեոդալիզմի հիմքը դա չէ, այլ հողի ֆեոդալական սեփականությունը։

2) Կոլտնտեսականի տնտեսության անձնական սեփականության հարցը։

Ճիշտ չէր լինի դասագրքի նախագծում ասել, թե «յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն ունի անձնական օգտագործման համար կով, մանր անասուններ և թռչուններ»։ Իրականում, ինչպես հայտնի է, կովը, մանր անասունները, թռչունները և այլն ո՛չ թե կոլտնտեսականի տնտեսության անձնական օգտագործման տակ են, այլ կազմում են նրա անձնական սեփականությունը։ «Անձնական օգտագործման համար» արտահայտությունը, ըստ երևույթին, վերցված է, Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնա-

դրությունից։ Բայց Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության մեջ սխալ է թույլ տրված։ ՍՍՌՄ Կոնստիտուցիայում, որն ավելի խնամքով է մշակվել, ասված է այլ բան, այն է՝

«Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն... ունի որպես անձնական սեփականություն օժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար»։

Դա, իհարկե, ճիշտ է։

Հարկավոր էր, բացի այդ, ավելի մանրամասն ասել, որ յուրաքանչյուր կոլտնտեսական, որպես անձնական սեփականություն, ունի մեկից մինչև այսքան կով, նայած տեղական պայմաններին, այսքան ոչխար, այծ, խոզ (նույնպես այսքանից մինչև այսքան, նայած տեղական պայմաններին) և անսահմանափակ քանակությամբ ընտանի թռչուններ (բադեր, սագեր, հավեր, հընդկահավեր)։

Այդ մանրամասնությունները մեծ նշանակություն ունեն մեր արտասահմանյան ընկերների համար, որոնք ցանկանում են ճշգրիտ կերպով իմանալ, թե այն բանից հետո, երբ մեզ մոտ իրականացված է գյուղատնտեսության կոլեկտիվացումը, կոլտնտեսականի տնտեսության մեջ ի՞նչն է մնում որպես նրա անձնական սեփականություն։

3) Գյուղացիների կողմից կալվածատերերին տրվող վարձակալման վճարի արժեքի, ինչպես նաև հողի գնման ծախսերի արժեքի հարցը։

Դասագրքի նախագծում ասված է, որ հողի ապգտյնացման հետևանքով «գյուղացիությունը ազատվեց կալվածատերերին տրվող վարձակալման վճարումներից, որ կազմում էին տարեկան մոտ 500 միլիոն ռուբլի» (հարկավոր է ասել «ոսկով»)։ Այդ թիվը հարկավոր է ճշտել, որովհետև դա, ինչպես ինձ թվում է, հաշվի է առնում վարձակալման վճարը ո՛չ թե ամբողջ Ռուսաստանում, այլ միայն Ռուսաստանի նահանգների մեծամասնությունում։ Ընդսմին պետք է նկատի ունենալ, որ Ռուսաստանի մի շարք ծայրամասերում վարձակալման վճարը տրվում էր բնամթերքով, որը, ըստ երևույթին, հաշվի չեն առել դասագրքի նախագծի հեղինակները։ Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ գյուղացիությունն ազատվեց ո՛չ միայն վարձակալման վճարից, այլև հողի գնման տարեկան ծախսերից։ Արդյոք հաշվի առնվա՞ծ է այդ բանը դասագրքի նախագծում։ Ինձ թվում է, որ հաշվի առնված չէ, այնինչ հարկավոր էր հաշվի առնել։

4) Պետական ապարատի հետ մոնոպոլիաների սերտաճման հարցը։

«Սերտաճում» արտահայտությունը հարմար չէ։ Այդ արտահայտությունը մակերեսային ու նկարագրական կերպով է նշում մոնոպոլիաների և պետության մերձեցումը, բայց չի բացահայտում այդ մերձեցման տնտեսական իմաստը։ Բանն այն է, որ այդ մերձեցման պրոցեսում տեղի է ունենում ո՛չ թե սոսկ սերտաճում, այլ պետական ապարատի ենթարկում մոնոպոլիաներին։ Ուստի պետք էր դեն նետել «սերտաճում» բառը և այն փոխարինել «պետական ապարատի ենթարկումը մոնոպոլիաներին» բառերով։

5) ՍՍՌՄ-ում մեքենաների կիրառման հարցը։

Դասագրքի նախագծում ասված է, որ «ՍՍՌՄ-ում մեքենաները կիրառվում են բոլոր դեպքերում, երբ նրանք աշխատանք են տնտեսում հասարակության համար»։ Դա բոլորովին այն չէ, ինչ հարկավոր էր ասել։ Առաջին, մե-

քլենները ՍՍՌՄ-ում միշտ էլ աշխատանք են տնտեսում հասարակության համար, որի պատճառով էլ մենք չգիտենք այնպիսի դեպքեր, երբ նրանք ՍՍՌՄ-ի պայմաններում աշխատանք չտնտեսեին հասարակության համար։ Երկրորդ, մեքենաները ո՛չ միայն տնտեսում են աշխատանքը, այլև դրա հետ մեկտեղ նրանք հեշտացնում են աշխատողների աշխատանքը, որի պատճառով էլ մեր պայմաններում, ի տարբերություն կապիտալիզմի պայմանների, բանվորները մեծ սիրով են օգտագործում մեքենաները աշխատանքի պրոցեսում։

Ուստի հարկավոր էր ասել, որ մեքենաները ոչ մի տեղ այնպես սիրով չեն կիրառվում, ինչպես ՍՍՌՄ-ում, որովհետև մեքենաները աշխատանք են տնտեսում հասարակության համար ու հեշտացնում են բանվորների աշխատանքը, և քանի որ ՍՍՌՄ-ում գործազրկություն չկա, բանվորները մեծ սիրով են օգտագործում մեքենաները ժողովրդական տնտեսության մեջ։

6) Կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի նյութական դրության հարցը։

Երբ խոսում են բանվոր դասակարգի նյութական դրության մասին, սովորաբար նկատի են ունենում արտադրության մեջ զբաղված բանվորներին և հաշվի չեն առնում գործազուրկների այսպես կոչված պահեստի բանակի նյութական դրությունը։ Ճի՞շտ է արդյոք այդպիսի վերաբերմունքը բանվոր դասակարգի նյութական դրության հարցին։ Ես կարծում եմ, որ ճիշտ չէ։ Եթե գոյություն ունի գործազուրկների պահեստի բանակ, որի անդամները ապրուստի ուրիշ միջոց չունեն, բացի իրենց աշխատուժի վաճառքից, ապա գործազուրկները չեն կարող չմտնել բանվոր դասակարգի կազմի մեջ, բայց եթե նրանք մտնում են բանվոր դասակարգի կազմի մեջ, նրանց մուրացիկ դրությունը չի կարող չազդել արտադրության մեջ զբաղված բանվորների նյութական դրության վրա։ Ուստի ես կարծում եմ, որ կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի նյութական դրությունը բնութագրելիս հարկավոր էր հաշվի առնել նաև գործազուրկ բանվորների պահեստի բանակի դրությունը։

7) Ազգային եկամտի հարցը։

Ես կարծում եմ, որ դասագրքի նախագծի մեջ հարկավոր էր անպայման մտցնել նոր գլուխ ազգային եկամտի մասին։

8) Դասագրքի մեջ Լենինի և Ստալինի մասին, որպես սոցիալիզմի քաղաքատնտեսության ստեղծողների մասին, հատուկ գլխի հարցը։

Ես կարծում եմ, որ «Մարքսիստական ուսմունքը սոցիալիզմի մասին։ Սոցիալիզմի քաղաքատնտեսության ստեղծումը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից» գլուխը պետք է հանել դասագրքից։ Այդ գլուխը ամենևին հարկավոր չէ դասագրքում, որովհետև ոչ մի նոր բան չի տալիս, այլ միայն դժգույն կերպով կրկնում է այն, ինչն ավելի մանրամասնորեն ասված է դասագրքի նախորդ գլուխներում։

Ինչ վերաբերում է մնացած հարցերին, ես ոչ մի դիտողություն չունեմ ընկերներ Օստրովիտյանովի, Լեոնտևի, Շեպիլովի, Գատովսկու և մյուսների «առաջարկությունների» վերաբերյալ։

## 9. ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ես կարծում եմ, որ ընկերները հաշվի չեն առնում քաղաքատնտեսության մարքսիստական դասագրքի ամբողջ նշանակությունը։ Դասագիրքը հարկավոր է ոչ միայն մեր սովետական երիտասարդության համար։ Նա առանձնապես հարկավոր է բոլոր երկրների կոմունիստների և կոմունիստներին համակրող մարդկանց համար։ Մեր արտասահմանյան ընկերները ցանկանում են իմանալ, թե մենք ինչպե՞ս ազատվեցինք կապիտալիստական ստրկությունից, ինչպե՞ս մենք վերափոխեցինք երկրի էկոնոմիկան սոցիալիզմի ոգով, ինչպե՞ս մենք հասանք բարեկամության զյուղացիության հետ, ինչպե՞ս մենք հասանք այն բանին, որ մեր՝ դեռ վերջերս աղքատ և թույլ երկիրը վերածվեց հարուստ, հզոր երկրի, թե ի՞նչ են ներկայացնում իրենցից կոլտնտեսությունները, ինչո՞ւ մենք, չնայած արտադրության միջոցների հանրայնացմանը, չենք ոչնչացնում ապրանքային արտադրությունը, փողը, առևտուրը և այլն։ Նրանք ցանկանում են այս ամենը և ուրիշ շատ բաներ իմանալ ոչ թե սոսկ հետաքրքրության համար, այլ որպեսզի սովորեն մեզանից և մեր փորձն օգտագործեն իրենց երկրի համար։ Ուստի քաղաքատնտեսության մարքսիստական լավ դասագրքի հրապարակ գալը ոչ միայն ներքաղաքական, այլև միջազգային մեծ նշանակություն ունի։

Հետևապես, հարկավոր է մի դասագիրք, որը կարողանա ծառայել որպես ռևոլուցիոն երիտասարդության սեղանի գիրք ոչ միայն երկրի ներսում, այլև արտասահմանում։ Նա չպետք է շատ մեծածավալ լինի, որովհետև շատ մեծածավալ դասագիրքը չի կարող սեղանի գիրք լինել և այն դժվար կլինի յուրացնել-հաղթահարել։ Բայց նա պետք է պարունակի այն ամբողջ հիմնականը, որ վերաբերում է ինչպես մեր երկրի էկոնոմիկային, այնպես էլ կապիտալիզմի ու գաղութային սիստեմի էկոնոմիկային։

Որոշ ընկերներ դիսկուսիայի ժամանակ առաջարկում էին դասագրքի մեջ մտցնել մի ամբողջ շարք նոր գլուխներ, պատմաբանները՝ պատմության վերաբերյալ, քաղաքագետները՝ քաղաքականության վերաբերյալ, փիլիսոփաները՝ փիլիսոփայության վերաբերյալ, տնտեսագետները՝ էկոնոմիկայի վերաբերյալ։ Բայց դա կհասցներ այնտեղ, որ դասագիրքը անասելի չափով կաճեր։ Դա, իհարկե, չի կարելի թույլ տալ։ Դասագիրքը պատմական մեթոդը օգտագործում է քաղաքատնտեսության պրոբլեմների լուսաբանման համար, բայց դա դեռ չի նշանակում, թե մենք պետք է քաղաքատնտեսության դասագիրքը տնտեսական հարաբերությունների պատմություն դարձնենք։

Մեզ հարկավոր է 500, մաքսիմում 600 էջանոց դասագիրք, ոչ ավելի։ Դա կլինի սեղանի գիրք մարքսիստական քաղաքատնտեսության վերաբերյալ,— լավ նվեր բոլոր երկրների երիտասարդ կոմունիստներին։

Ի դեպ, նկատի ունենալով արտասահմանյան երկրների կոմպարտիաների մեծամասնության մարքսիստական զարգացման ոչ-բավարար մակարդակը, այդ դասագիրքը կարող էր մեծ օգուտ բերել այդ երկրների նաև ոչ-երիտասարդ կադրային կոմունիստներին։

## 10. ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Որոշ ընկերներ դիսկուսիայի ժամանակ չափազանց մեծ եռանդով էին «հողմացրիվ անում» դասագրքի նախագիծը, հայհոյում էին նրա հեղինակներին սխալների և թերացումների համար, պնդում էին, թե նախագիծը չի հաջողվել։ Դա անարդարացի է։ Իհարկե, դասագրքում կան սխալներ և թերացումներ,— դրանք համարյա միշտ լինում են մեծ գործում։ Բայց ինչ էլ որ լինի, դիսկուսիայի մասնակիցների ճնշող մեծամասնությունը այնուամենայնիվ ընդունեց, որ դասագրքի նախագիծը կարող է ծառայել որպես ապագա դասագրքի հիմք և միայն որոշ ուղղումների ու լրացումների կարիք է զգում։ Իսկապես, բավական է միայն դասագրքի նախագիծը համեմատել քաղաքատնտեսության՝ շրջանառության մեջ եղած դասագրքերի հետ, որպեսզի հանենք այն հետևությանը, որ դասագրքի նախագիծը մի ամբողջ գլխով բարձր է գոյություն ունեցող դասագրքերից։ Այդ է դասագրքի նախագծի հեղինակների մատուցած մեծ ծառայությունը։

Ես կարծում եմ, որ դասագրքի նախագիծը բարելավելու համար հարկավոր է նշանակել սակավաթիվ մի հանձնաժողով, այնտեղ մտցնելով ո՛չ միայն դասագրքի հեղինակներին և ո՛չ միայն դիսկուսիայի մասնակիցների մեծամասնության կողմնակիցներին, այլև մեծամասնության հակառակորդներին, դասագրքի նախագծի թունդ քննադատներին։

Լավ կլիներ հանձնաժողովի մեջ մտցնել նաև մի փորձված վիճակագիր՝ թվերը ստուգելու և նախագծի մեջ նոր վիճակագրական նյութեր մտցնելու համար, ինչպես նաև մի փորձված իրավաբան՝ ձևակերպումների ճշգրտությունը ստուգելու համար։

Հարկավոր է հանձնաժողովի անդամներին ժամանակավորապես ազատել ամեն տեսակ այլ աշխատանքից, նրանց լիովին ապահովելով նյութական տեսակետից, որպեսզի նրանք կարողանան ամբողջովին նվիրվել դասագիրքը կազմելու աշխատանքին։

Բացի այդ, հարկավոր է նշանակել խմբագրական հանձնաժողով, ասենք, երեք մարդուց՝ դասագրքի վերջնական խմբագրման համար։ Դա անհրաժեշտ է նաև ոճի միասնության հասնելու համար, որպիսին, դժբախտաբար, չկա դասագրքի նախագծում։

Պատրաստի դասագիրքը Կենտկոմ ներկայացնելու ժամկետը՝ 1 տարի։

Ի. ՍՏԱԼԻՆ

1 փետրվարի 1952 թ.